


Հրաչ Բայադյան
Դավիթ Ստեփանյան
Վահրամ Սողոմոնյան

Հասարակագիտություն



Մեթոդական ուղեցույց



ՄԱՍՆԱԿՉԱՅԻՆ
ՂՊՐՈՉ

7

Յ.Բայադյան, Դ.Ստեփանյան, Վ.Սողոմոնյան

«Հասարակագիտություն» առարկայի
7-րդ դասարանի դասագրքի
օգտագործման մեթոդական ուղեցույց



Երևան 2023

ՀՏԴ 373.016:30(07)

ԳՄԴ 74.266.0g7

Բ 260

Ջեղինակներ՝ Ջրաչ Բայադյան, Դավիթ Ստեփանյան,
Վահրամ Սողոմոնյան

Սրբագրիչ՝ Գոհար Ամիրբեկյան

Ճարվածք և ձևավորում՝ Լուսինե Նավասարդյան

Բայադյան Ջրաչ, Ստեփանյան Դավիթ,
Սողոմոնյան Վահրամ

Բ 260 Հասարակագիտություն: Մեթոդական ուղեցույց:
7-րդ դասարան / Ջ. Բայադյան, Դ. Ստեփանյան, Վ.
Սողոմոնյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՅ,
2023.- 108 էջ:

ՀՏԴ 373.016:30(07)

ԳՄԴ 74.266.0g7

Երաշխավորված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:

© Բայադյան Ջ., 2023

© Ստեփանյան Դ., 2023

© Սողոմոնյան Վ., 2023

© «Մասնակցային դպրոց» ԿՅ, 2023

© ՀՀ ԿԳՄՍՆ, 2023

ISBN 978-9939-1-1731-7

Սիրելի ուսուցիչ,

բարի գալուստ «Հասարակագիտություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքի կիրառությանն օժանդակող մեթոդական ուղեցույց:

Այս ուղեցույցը տրամադրում է արդյունավետ ու մասնակցային դասեր վարելու համար անհրաժեշտ տեղեկատվություն և խորհուրդներ: «Մասնակցային դպրոց» ԿՀ միջգիտակարգային նախագծի շրջանակում ստեղծված տվյալ դասագիրքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ ընդունված Հանրակրթության պետական չափորոշչին և կարողունակությունների վրա հիմնված ուսուցման սկզբունքներին:

Այստեղ դուք կարող եք ծանոթանալ Նոր չափորոշչի առանձնահատկություններին, առարկայի նպատակներին և վերջնարդյունքներին, դասագրքի բովանդակության կառուցվածքին, կգտնեք գործնական խորհուրդներ, դասավանդման և ուսումնառության ռազմավարություններ, որոնք կօգնեն ձևավորել ուսումնառության դրական միջավայր, ներառել աշակերտներին, աջակցել նրանց անձնական ու առարկայական բնագավառում աճին:

Հանրակրթության պետական Նոր չափորոշչին համահունչ մենք պատրաստել ենք կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր, օրինակելի թեմատիկ պլաններ, նկարագրել մեթոդներ ու հնարներ, ցույց տվել յուրաքանչյուր թեմայի շուրջ աշխատելու նրբություններն ու կարևոր շեշտադրումները:

Մենք գիտենք, որ դուք առաջիններից եք, ովքեր հանձն են առել Նոր չափորոշիչներով աշխատելու պատասխանատու և պատվաբեր գործը, և այդ ճանապարհին կարող եք

ունենալ դժվարություններ: Այդ նպատակով էլ ստեղծել ենք այս ձեռնարկը, որը կօգնի ձեր դասավանդման գործընթացը դարձնել մոտիվացնող և ստեղծարար:

Մենք պետք է նաև հաշվի առնենք, որ լավ դաս կազմակերպելու համար բավարար չեն դասագրքերը և ձեռնարկները, և անընդհատ անհրաժեշտ է ինքնակրթվել ու զարգացնել առարկայի, մանկավարժության վերաբերյալ մեր գիտելիքները: Այդ նպատակով էլ ձեռնարկում ձեզ համար ներառել ենք ինքնուրույն ուսումնառության լրացուցիչ ու օժանդակ նյութեր, որոնք, վստահ ենք, կարող են օգտակար լինել:

Մենք գնահատում ենք ձեր աշխատանքը, ջանասիրությունն ու եռանդը և շնորհակալություն հայտնում սերունդների կրթության գործընթացում ձեր ներդրման համար:

Հուսով ենք, որ այս ձեռնարկը կոգեշնչի և կմոտիվացնի ձեզ՝ լինելու լավագույն ուսուցիչը:

Մաղթում ենք հաջողություն:

Չեղինակային խումբ

Բովանդակություն

1. Ժողովրդավարական մասնակցային մշակույթի ձևավորումը «Հասարակագիտություն» առարկայի միջոցով
2. Ինչպես սովորեցնել և սովորել այս դասագրքով
3. Մեր դասագիրքը և կարողունակությունների վրա հիմնված ուսուցումը
4. ԿՁՈՒ դասի առանձնահատկությունները
5. ԿՁՈՒ և ավանդական դասի տարբերությունները
6. Հանրակրթության պետական չափորոշչի պահանջները. «Հասարակագիտություն» առարկայի նպատակները
7. «Հասարակագիտություն» առարկայի 7-րդ դասարանի վերջնարդյունքները
8. Առարկայի, դասընթացի ընդհանուր բնութագիրը
9. Օրինակելի թեմատիկ պլան
10. Դասագրքի բովանդակության մեկնաբանություն (օրինակելի դասապլան)

11. Ինչպե՞ս արդյունավետ կառուցել դասը
12. Ներառականության սկզբունքը ուսումնական գործընթացում
13. Գնահատում
14. Նախագծային աշխատանք
15. Մեթոդներ
16. Գրականություն և այլ նյութեր ուսուցչի ինքնակրթության և ինքնազարգացման համար

1. Ժողովրդավարական մասնակցային մշակույթի ձևավորումը «Հասարակագիտություն» առարկայի միջոցով

Ժողովրդավարական և բազմակարծիք հասարակության համար որոշիչ է մասնակցային մշակույթի ձևավորումը, որի անհրաժեշտ նախապայմանը կարողունակությունների առկայությունն է: Հայաստանի Հանրապետության Հանրակրթության պետական նոր չափորոշիչը սահմանում է ութ վերառարկայական (առանցքային) կարողունակություններ, որոնք պետք է ձևավորվեն բոլոր դասերի ժամանակ, ինչն էլ պահանջում է ուսուցիչների մասնակցային աշխատանք: Այդ կարողունակությունները գործիքներ են, որոնք նպաստում ենք նաև առարկայական գիտելիքի ավելի լավ յուրացմանը:

«Հասարակագիտություն» առարկայի համար հատկապես կարևոր են ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը, սոցիալական և ինքնաճանաչողական կարողունակությունը, տնտեսական կարողունակությունը, ինչպես նաև այս կամ այն չափով մնացյալ վերառարկայական կարողունակությունները: Առարկայի շրջանակում գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների ձևավորման որոշ մոտեցումներին ծանոթանալու համար խորհուրդ ենք տալիս ընթերցել գրականության ցանկում նշված «Քննադատական և ստեղծագործական մտածողություն, մասնակցային մշակույթ և քաղաքացիական համերաշխություն» հայեցակարգային փաստաթղթին, ինչպես նաև «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում» ձեռնարկին: Այս ձեռնարկում Դուք կգտնեք կարևոր սահմանումներ և օգտակար նյութեր դասի պլանավորման համար:

Սկսելով «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը՝ անհրաժեշտ է կենտրոնանալ հասարակական զարգացումները քննադատաբար վերլուծելու, պատասխանատու որոշումներ կայացնելու ընդունակ, աշխարհի առաջ բաց ու նորարար անհատի համար առանցքային հմտությունների ձևավորման վրա: Բացի այդ, հասարակագիտական կրթությունը կոչված է ծառայելու բազմակարծիք մասնակցային մշակույթի, պատմական հիշողության, մշակութային ու քաղաքացիական ընդհանուր արժեքների շուրջ հանրային համերաշխության ձևավորմանը: Այստեղ կա ընդհանուր են հետևյալ սկզբունքները, արժեքները, հմտություններն ու գործելակերպերը.

- սովորողի խոսունակությունն ու ազատ խոսելու ընդունակությունը
- իրողությունների մասին դատողություններ անելու հմտությունը
- ռացիոնալ փաստարկման սկզբունքը
- սեփական կարծիքն արտահայտելու և մյուսների կարծիքը լսելու կամքը
- անհատական և հանրային շահերի ողջամիտ հավասարակշռումը
- գործողությունների և նպատակների շուրջ համատեղ պայմանավորվածությունների ձեռքբերման և որոշումների ընդունման հմտությունը
- հակասություններն ու տարակարծությունները հաղթահարելու և փոխզիջումային որոշումների կայացման համոզմունքը
- արդյունքի ստեղծմանն ուղղված ինքնակազմակերպման և կոլեկտիվ աշխատանքի հմտությունները:

2. Ինչպե՞ս սովորեցնել և սովորել այս դասագրքով

Դասագրքի «Ինչպես սովորել այս դասագրքով» բաժնում ներկայացված են դասագրքի գլխավոր բաղադրիչներն ու օգտագործման սկզբունքները: Դրանք նախատեսված են ոչ միայն ուսուցիչների, այլև աշակերտների և ծնողների համար:

Դասագրքի կառուցվածքային բաղադրիչները

Մեր դասագրքի յուրաքանչյուր գլուխ սկսվում է երկու էջերի բացվածքով: Այստեղ սովորողները կարող են կարդալ, թե ինչ կիմանան և կկարողանան՝ սովորելով այդ գլխի դասերը: Պատկերները, լուսանկարներն ու տեքստերը սովորողներին կհուշեն նաև, թե նա արդեն ինչ գիտի այդ թեմաների մասին:

Ենթագլուխներում ընգրկված յուրաքանչյուր թեմատիկ բաժին բաղկացած է հեղինակային տեքստից, նյութերից, պատկերային և տեքստային տեղեկատվությունից և առաջադրանքներից: Ենթագլուխները նույնպես նշված են թվերով: Թեմայի վերնագիրն ու ներածական տեքստը կօգնեն պատկերացում կազմել այդ դասի մասին:

Լրացուցիչ նյութերը միշտ նշված են Ն տառով և համարակալված են: Օրինակ՝ Ն3., այսինքն՝ նյութ համար 3:

Թեմայի մեջ նյութերից բացի ներկայացված է նաև լրացուցիչ տեղեկատվություն: Դրանք նշված են S տառով և նույնպես համարակալված են: Օրինակ՝ S2., այսինքն՝ տեղեկատվություն համար 2: Տեղեկատվությունը թույլ է տալիս

ավելի լավ պատրաստվել դասին և օգնում է կատարել թեմայի առաջադրանքները:

Սահմանումներ

Դասագրքում ներկայացված են նաև որոշ կարևոր հասկացությունների սահմանումներ, որոնք առանձնացված են հիմնական տեքստից:

Ինչպե՞ս օգտագործել բացատրական բառարանը

Թեմայի կարևոր նշանակություն ունեցող բառերը նշված են աստղանիշով: Այդ բառերը բացատրված են դասագրքի վերջնամասում տեղադրված բացատրական բառարանում: Ամեն գլխում հանդիպող բառերը առանձնացված են համապատասխան գույնով:

Գրականություն

Դասագրքի յուրաքանչյուր գլխում օգտագործված գրականության ցանկը կարող էք գտնել ուսուցչի ձեռնարկի «Դասագրքի բովանդակության մեկնաբանություն» բաժնում կամ հետևյալ շտրիխ կոդի միջոցով:

Ինչպե՞ս օգտագործել առաջադրական բայերն ու առաջադրանքները

Առաջադրական բայերը առաջադրանքներում օգտագործվող և գործողություն կատարելու հրահանգ ենթադրող բայերն են, որոնք ամփոփված են պարզեցված եռաստիճան համակարգում: Առաջադրական բայերը կարողունակությունները դարձնում են չափելի և «շոշափելի»: Դրանք օգնում են տարբերակված ուսուցում կազմակերպել տարբեր

կարողություններ ու առաձևահատկություններ ունեցող սովորողների համար:

Թեմայի առաջադրանքները մեծա մասամբ տեղադրված են յուրաքանչյուր ենթագլխի վերջում: Որոշ առաջադրանքներ ներկայացված են ենթագլխի միջնամասում, որին հաջորդում է նոր ենթավերնագիր:

Ուսուցիչը հանձնարարությունները ձևակերպում է առաջադրական բայերով: Ըստ բարդության մակարդակների առաջադրական բայերը կարող եք գտնել գրքի սկզբնամասում:

Առաջադրանքներում օգտագործվում են կյութերի (Ն) և տեղեկատվության (Տ) նշանները: Բացի այդ, առաջադրանքները, ըստ բարդության, բաժանված են երեք մակարդակի և նշված են տարբեր գույներով: Առաջադրանքների բարդությունը պայմանավորվում է օգտագործվող առաջադրական բայերով: Առաջին մակարդակը նշված է կանաչ գույնով, երկրորդը՝ նարնջագույնով, իսկ երրորդը՝ կապույտով: Երբեմն մեկ առաջադրանքի մեջ կհանդիպի միաժամանակ երկու մակարդակի խնդիր:

Առաջադրական բայերը պայմանականորեն բաժանվում են երեք խմբի: Դրանք գործողություն ենթադրող առաջադրանքներ են: Այդ գործողությունների մի մասը պահանջում է ընդամենը որոշակի գիտելիքի առկայություն, մյուս մասը՝ որոշակի կարողությունների և հմտությունների տիրապետում, երրորդ խումբը պահանջում է որոշակի արժեհամակարգի, երևույթների նկատմամբ որոշակի դիրքորոշման առկայություն և դրսևորում: Այս բայերը գործողության մեջ շոշափելի և չափելի են դարձնում կարողունակությունների

ձևավորման մակարդակը սովորողների մոտ և հանդիսանում են ձևավորող գնահատման արդյունավետ միջոց:

Պահանջների մակարդակները փոխկապակցված են: Ընդ որում, պահանջների 2-րդ մակարդակը ներառում է պահանջների 1-ին մակարդակը, իսկ պահանջների 3-րդ մակարդակն ընգրկում է առաջին երկու մակարդակները: Չնայած պահանջների երեք մակարդակների միջև չկան հստակ սահմաններ, այդուհանդերձ, այդ մակարդակների կիրառումն էապես նպաստում է հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված կարողունակությունների վավերականության ստուգմանը և առաջադրանքների բարդության սահմանմանը, ինչպես նաև կրթության բոլոր մասնակիցների համար քննական արդյունքների գնահատման թափանցիկությանը:

Դասագիրքն ավելի բաց ու ընդգրկուն դարձնելու համար որոշ դեպքերում տեղադրված են QR կոդեր: Սովորողները կարող են սկանավորել դրանք իրենց բջջայինով և օգտագործել դրանք որպես լրացուցիչ նյութ գիտելիքի համալրման և առաջադրանքների կատարման համար:

3. Մեր դասագիրքը և կարողունակությունների վրա հիմնված ուսուցումը

Մեր դասագիրքն առանձնանում է կարողունակությունների վրա հիմնված ուսուցման մի շարք տարրերով: Որո՞նք են դրանք և ի՞նչ է կարողունակությունների վրա հիմնված ուսուցումը: Ստորև ներկայացնում ենք այս հարցերի պատասխանները:

Ի՞նչ է կարողունակությունը (կոմպետենցիան)

Կարողունակությունը գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների այն համախումբն է, որն ուղղված է տվյալ իրավիճակում որոշակի խնդիրների լուծմանը:

Ի՞նչ է կարողունակությունների ձևավորմանն ուղղված ուսուցումը

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված (ԿՁՈ) ուսուցումը գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների համակարգ է, որը հնարավորություն է տալիս սովորողին պատշաճ և արդյունավետ կերպով արձագանքելու տարատեսակ իրավիճակներին: Հանրակրթության պետական չափորոշիչը, ինչպես նաև առարկայական Նոր չափորոշիչներն ու ծրագրերն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Ինչպե՞ս են ձևավորվում և չափվում կարողունակությունները

Կարողունակությունները ձևավորվում են սովորողների համար ուսումնառության այնպիսի իրավիճակների ստեղծ-

ման միջոցով, որոնց դեպքում նրանք ի հայտ են բերում առարկայական, մեթոդական, սոցիալական և այլ գործնական հմտություններ, ինչպես նաև արժեքների ձևավորման ու դիրքորոշումների ձևակերպման հնարավորություն:

Կարողունակությունները չափվում են այնպիսի առաջադրանքներով, որոնք կոչված են միաժամանակ պարզել սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները: Այդ առաջադրանքների համար օգտագործվում են առաջադրական բայեր, որոնք ըստ բարդության աստիճանի բաշխվում են պահանջների երեք մակարդակներում:

Առաջադրական բայերն ու պահանջների մակարդակները ներառված են մեր դասագրքում, իսկ դրանց կիրառման եղանակները բացատրված են սույն ձեռնարկում:

Կարողունակությունների ձևավորման համար կարևոր է, որպեսզի ուսուցիչները պարբերաբար օգտագործեն կարողունակություններ ստուգող հարցեր և առաջադրանքներ, ինչպես նաև ստուգողական աշխատանքների ժամանակ ստուգեն ոչ միայն գիտելիքի, այլև կարողունակությունների ձևավորումը:

«Հասարակագիտություն» առարկայի կարողունակությունների մոդել

Յուրաքանչյուր առարկա կարող է ունենալ կարողունակությունների ձևավորման առանձնահատուկ մոդել: Ներկայացնում ենք առարկայի դասավանդման համար մեր կողմից առաջարկվող հետևյալ մոդելը: Դրանում ներկայացված են նաև կարողունակությունների ոլորտները՝ հասարակագիտական առարկայական ու մեթոդական կարողունակություն, արժեքային կարողունակություն, դատողական

կարողունակություն և գործելու մասնակցային կարողունակություն: Մոդելը ցույց է տալիս ժողովրդավարական կարողունակության ձևավորման ճանապարհը:



«Հասարակազգիտություն» առարկայի կարողունակությունների մոդել

Առարկայական և վերաբարկայական կարողունակությունների ձևավորումը դասի ժամանակ

Վերաբարկայական կամ առանցքային կարողունակությունները, ինչպես արդեն նշվեց, ութն են և արտացոլված են Հանրակրթության պետական չափորոշում: Դրանք

հիմնականում ենթադրում են գործողություններ: Վերառարկայական ութ կարողունակություններն են՝

- 1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,**
- 2) սովորել սովորելու կարողունակություն,**
- 3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,**
- 4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,**
- 5) թվային և մեդիա կարողունակություն,**
- 6) մշակութային կարողունակություն,**
- 7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,**
- 8) տնտեսական կարողունակություն:**

Առարկայական կարողունակությունները կամ չափորոշում ձևակերպված վերջնարդյունքները ձևակերպված են առանձին առարկայական ծրագրերում:

Վերառարկայական կարողունակություններն անհրաժեշտ են անձի զարգացման, հասարակական կյանքին ակտիվ մասնակցության, ռեսուրսների շարունակական ողջամիտ օգտագործման, ինչպես նաև արժեքային պատկերացումների ձևավորման համար: Վերառարկայական կարողունակությունները փոխկապակցված են միջառարկայական կապերով: Դրանց ձևավորումը պահանջում է ուսուցիչների մասնակցային աշխատանք:

Յուրաքանչյուր դասի համար սովորաբար նախատեսվում է կենտրոնանալ մեկ առարկայական և մի քանի վերառար-

կայական կարողունակությունների ձևավորմանը: Վերա-
ռարկայական կարողունակությունները սովորաբար ծառա-
յում են առարկայական կարողունակությունների կամ վերջ-
նարդյունքների ձևավորմանը: Իհարկե վերջիններս էլ
նպաստում են վերառարկայական կարողունակությունների
ձևավորմանն ու ամրապնդմանը:

Ստորև ներկայացնում ենք Հանրակրթության պետական
չափորոշչով սահմանված ութ վերառարկայական կարող-
ունակությունների նկարագրությունը: Դրանք ամփոփ կեր-
պով արտացոլում են միջնակարգ կրթության այն մեծ նպա-
տակները, որին ուղղված պետք է լինի ուսուցումը հանրակր-
թական դպրոցում: Այս ձևակերպումները կօգնեն Ձեզ
կենտրոնանալ միջնակարգ կրթության առանցքային նպա-
տակների վրա:

1) Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և
բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի
լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների
և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ու-
սումնառության և հասարակական կյանքին մասնակցու-
թյան համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը
կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմ-
քը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության
մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական,
տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահա-
կան, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն
ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռ-
նել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայե-

ցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

2) Սովորել սովորելու կարողունակություն

Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

3) Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատ-

վություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչելու դրանց տարբերությունները:

4) Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և

հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն.

5) Թվային և մեդիա կարողունակություն

Սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով:

6) Մշակութային կարողունակություն

Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Չայաստանի աշխարհագրության, հասարակական-քա-

ղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:

7) Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

Սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները կարողանում են ընկալել և արդյունավետ կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Աշակերտներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը:

8) Տնտեսական կարողունակություն

Աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները: Աշակերտներն ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:

4. ԿՁՈՒ դասի առանձնահատկությունները

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված (ԿՁՈՒ) դասերը պարունակում են 12 կարևորագույն տարրեր:

1. Աշակերտակենտրոնություն

Արդյո՞ք թեմաներն ու մեթոդաբանությունը աշակերտական կողմնորոշում ունեն: Արդյո՞ք հաշվի է առնվում աշակերտների նախնական գիտելիքը:

2. Խնդրակենտրոնություն

Արդյո՞ք աշակերտներն ինքնուրույն ճանաչում են խնդիրը: Արդյո՞ք փոխանցվելիք առարկայական գիտելիքը ծառայում է խնդրի լուծմանը:

3. Ավելի շատ կառուցում, քան հրահանգում

Արդյո՞ք աշակերտներին ակտիվացնող դասաձևերն ունեն ավելի մեծ մասնաբաժին, քան ուսուցչակենտրոն ձևերը:

4. Ինքնակազմակերպում

Արդյո՞ք աշակերտը կարող է ինքնուրույն կազմակերպել դասապրոցեսի առանձին մասերը:

5. Տարբերակում

Արդյո՞ք նախապես հստակեցված են կոմպետենցիայի ձեռքբերվելիք մակարդակները: Արդյո՞ք աշխատանքային առաջադրանքները բաժանված են աստիճանների:

6. Մեթոդական և վարքային կողմնորոշում

Արդյո՞ք կիրառվող մեթոդները նպաստում են առարկայական և սոցիալական կոմպետենցիաների ձեռքբերմանը, ինչպես նաև աշակերտների ակտիվացմանը:

7. Կանխորոշում

Արդյո՞ք տեղի է ունենում կոմպետենցիաների տարբերակված ստուգում կամ դասամիավորի սկզբում ուսումնական մակարդակի կանխորոշում:

8. Անհատականացում

Արդյո՞ք դասապրոցեսի ընթացքում աշակերտն ունի ժամանակային և բովանդակային ազատ տարածքներ: Արդյո՞ք քննարկվում են ուսման տարբեր ճանապարհներ:

9. Գործընթացային / նպատակային կողմնորոշում

Արդյո՞ք ձեռք բերված կոմպետենցիաներն ամրապնդվում են կրկնական և կուտակային ուսուցման միջոցով: Արդյո՞ք պլանավորման համար ելման կետ է ընդունվում նպատակը:

10. Առաջադիմության կողմնորոշում

Որտե՞ղ կարող է աշակերտը ցուցադրել իր կողմից ձեռք բերված կոմպետենցիան: Արդյո՞ք ուսումնական գործընթացը հանգում է գնահատման ենթակա արդյունքի:

11. Ուսուցում օրինակներով

Ո՞ր կոնկրետ օրինակը կարող է ծառայել կոմպետենցիայի ձեռքբերմանը: Ինչքանո՞վ է անհրաժեշտ կատարել դիդակտիկ կրճատումներ:

12. Անդրադարձ և կողմնորոշում

Արդյո՞ք քննադատաբար անդրադարձ է կատարվում ուսումնական գործընթացին և կոմպետենցիաների ձեռքբերմանը: Արդյո՞ք ստացվում են աշակերտի նախնական գիտելիքի և ուսումնական գործընթացի մասին անհատական արձագանքներ:

5. ԿՁՈՒ և ավանդական դասի տարբերությունները

Թե ավանդական և թե ԿՁՈՒ դասի ժամանակ ուսուցիչը ձևավորում է որոշակի կարողունակություններ: Այդուհանդերձ ԿՁՈՒ դասն առանձնանում է կարողունակությունների ձևավորմանն ուղղված համակարգային մոտեցմամբ: Ստորև կարող եք տեսնել այդ տարբերությունները:

Ավանդական դաս	ԿՁՈՒ դաս
Սովորողները պասիվ են: Հիմնականում լսում են:	Սովորողներն ակտիվ են: Բացի լսելուց՝ հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու:
Հիմնականում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը:	Բացի ուսուցիչ-աշակերտ կապից՝ գործում է աշակերտաշակերտ ուսուցողական կապը:
Ուսուցիչը, ըստ թեմատիկ պլանի, ծրագիրն «անցնում է»:	Ուսուցիչը չի անցնում հաջորդ թեմային, քանի դեռ աշակերտները չեն յուրացրել թեմայի առանցքային գաղափարները:
Ուսումնական նյութը ծավալուն է: Հաճախ կարևորն ու անկարևորը տարբերակված չեն:	Ուսումնական նյութը կառուցված է առանցքային կոմպետենցիաների և գաղափարների շուրջ:
Ուսումնառության նպատակները ոչ միշտ են չափելի և թափանցիկ:	Ուսումնառության նպատակները չափելի են և թափանցիկ են սովորողների համար:

<p>Շեշտը դրվում է գիտելիքների, հմտությունների ուսուցման վրա:</p>	<p>Գիտելիքների և հմտությունների ուսուցումից զատ՝ կարևորվում է նաև արժեքների և վերաբերմունքի ուսուցումը:</p>
<p>Կարևորվում է ուսումնական առարկաների անջատ ուսուցումը:</p>	<p>Առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են վերառարկայական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են խնդիրների լուծումը, քննադատական մտածողությունը, համագործակցությունը:</p>
<p>Կարևորվում է ուսումնական նյութի մեխանիկական վերարտադրությունը՝ առանց մտածողության հմտությունների, գործնական հմտությունների հետ կապակցելու:</p>	<p>Ուսումնական նյութի մեջ կարևորվում է բովանդակության խոր ըմբռնումը և դրա կապակցումը ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների հետ:</p>
<p>Սովորողները անհատական մոտեցման են արժանանում միայն այն դեպքում, եթե նրանց ակադեմիական ձեռքբերումների մակարդակը շատ բարձր է կամ շատ ցածր:</p>	<p>Սովորողները ստանում են իրենց կրթական կարիքներին համապատասխանող աջակցություն:</p>
<p>Հիմնականում օգտագործվում է ամփոփիչ գնահատանիշով գնահատումը: Թվանշանն օգտագործվում է աշակերտներին դաստասելու համար:</p>	<p>Օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ: Շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա: Գնահատականն օգտագործվում է աշակերտների առաջընթացը չափելու համար:</p>

6. Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջները. «Հասարակագիտություն» առարկայի նպատակները

Հանրակրթության պետական չափորոշիչի համաձայն «Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել ժողովրդավարության հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մասնակցող և սոցիալապես պատասխանատու քաղաքացի:

«Հասարակագիտություն» առարկան սովորողին հասարակական գործընթացներն ուսումնասիրելու, դրանց մասին քննադատական մոտեցում ձևավորելու և սեփական դիրքորոշում ունենալու հնարավորություն է տալիս: Սովորողը պետք է կարողանա գիտականորեն ընկալել մարդու և հասարակության հիմնահարցերը, քաղաքական կարգերն ու գաղափարները, կայուն զարգացման հակասությունները, հետազոտել և մեկնաբանել դրանք, տիրապետել ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների, իրազեկ լինել տեղական, ազգային և համաշխարհային հիմնախնդիրներին՝ հենվելով ազգային ու համամարդկային արժեքների վրա:

Հիմնական (միջին) դպրոցում «Հասարակագիտություն» առարկայի հիմնական նպատակը հետևյալ հմտությունների ձևավորումն է:

1. Բնութագրի մարդ, բնություն, մտածողություն հասկացությունները:
2. Գիտակցի կարիքների ու ցանկությունների անսահմանափակությունն ու ռեսուրսների սահմանափակությունը:
3. Հասկանա ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու անհրաժեշտությունն ու ձևերը:
4. Սահմանի առողջ և անվտանգ կենսակերպի կանոններն ու բաղադրիչները:

5. Բացատրի և հիմնավորի անձի առանձնահատկությունները և հասարակական կյանքի օրինաչափությունները:
6. Մեկնաբանի և վերլուծի սեփական հույզերը, ցանկությունները, կարիքները, նպատակները, սեփական յուրահատկություններն ու հակումները:
7. Գիտակցի հույզերի, մտածողության և վարքագծի դերը աշխարհաճանաչողության գործում:
8. Թվարկի մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում:
9. Բացատրի ազատություն, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, քաղաքացիություն, իրավունքներ և պարտականություններ հասկացությունները:
10. Ներկայացնի և քննարկի համայնքի խնդիրներն ու բարելավման ուղիները:
11. Ճանաչի մեդիայի ու խոսքի ազատության դերը, որպես ակտիվ քաղաքացի կարողանա օգտագործել մեդիա գործիքները ժողովրդավարական և մարդու իրավունքների պաշտպանության գործընթացներում:
12. Քննադատորեն վերլուծի և ստուգի տեղեկությունները, տարբերի հավաստի ու կեղծ լուրերը:

7. «Հասարակագիտություն» առարկայի 7-րդ դասարանի վերջնարդյունքները

«Հասարակագիտություն» առարկայի 7-րդ դասարանի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն են.

- 7.1.1 Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում:
- 7.1.2 Նկարագրի մարդու պահանջմունքները:
- 7.1.3 Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:

- 7.2.1 Մարդու էությունից բխեցնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը:
- 7.2.2 Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը:
- 7.2.3 Ներկայացնի հասարակության սոցիալական կազմը:

- 7.3.1 Մեկնաբանի ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում:
- 7.3.2 Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարներ:
- 7.3.3 Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը:

- 7.4.1 Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը:
- 7.4.2 Վերլուծի բարոյականության ոսկե կանոնը:
- 7.4.3 Մեկնաբանի բարոյականության հիմնական հասկացությունները:
- 7.4.4 Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրոիզմը:

- 7.5.1 Ներկայացնի «գեղեցիկ» հասկացությունը և իրեն շրջապատող իրերի գեղեցկությունը:
- 7.5.2 Մեկնաբանի պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի պահպանման գործում:

- 7.5.3 Արվեստի գործերից օրինակներ բերի գեղագիտական հիմնական հասկացությունները մեկնաբանելիս:
- 7.6.1 Բացատրի իրավունք հասկացության իմաստը և դերը մարդու կյանքում:
- 7.6.2 Տարբերակի իրավական և բարոյական նորմերը::
- 7.6.3 Ներկայացնի իրավունքի աղբյուրները՝ նորմատիվ իրավական ակտ, իրավական սովորույթ, նախադեպ:

- 7.7.1 Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից:
- 7.7.2 Նկարագրի արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները:
- 7.7.3 Համադրի անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորի բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը:
- 7.7.4 Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:

- 7.8.1 Հիմնավորի քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում:
- 7.8.2 Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:

8. Առարկայի, դասընթացի ընդհանուր բնութագիրը

ա) «Հասարակագիտություն» առարկայի այժմեականությունը

«Հասարակագիտություն» առարկայի այժմեականությունը պայմանավորված է ուսուցման երեք բաղադրիչներով՝ հմացական, սոցիալական և անձնային

հմացական (կոգնիտիվ) բաղադրիչ: Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր պատկերացում: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների շրջանում քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև աշխարհայացքային տարբերությունները, ինչի հետևանքով հաճախ փորձում են մարդկանց ապակողմնորոշել, մանիպուլացնել, զրկել ինքնուրույն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է, որ սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Դա հասարակական երևույթները տարբեր կողմերից դիտարկելու, դրանց դրական և բացասական հայեցակետերի մասին կշռադատելու և հիմնավորված որոշումներ կայացնելու հնարավորություն է տալիս: Հասարակական գործընթացների բազմազանությունը նաև ոչ ստանդարտ մոտեցումներ դրսևորելու և դրանով իսկ սովորողների ստեղծագործական մտածողությունը զարգացնելու լավ հնարավորություն է ստեղծում:

Այս առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիա գրագիտության ձևավորումը, որոնք

համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյունները:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերել մարդու մտածողության մասին և դրա շնորհիվ յուրացրած հմտությունները կիրառել որոշակի իրավիճակներում:

Սոցիալական բաղադրիչ: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ժամանակակից աշխարհում կարևորվում են սոցիալական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, համագործակցությունը, դիմացինին հասկանալու կարողությունը, կոնֆլիկտներ լուծելու հմտությունը: Շատ կարևոր են այնպիսի որակների զարգացումը, ինչպիսիք են սոցիալական համերազխությունը, սոցիալական պատասխանատվությունը, սոցիալական ձեռներեցությունը և մասնակցությունը:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ ձեռք բերել սոցիալական հմտությունների մասին և դրանք կիրառել հասարակական տարբեր երևույթներ բացատրելու գործընթացում:

Անձնային զարգացման բաղադրիչ: Հասարակությունների զարգացման մակարդակը էապես կախված է այն հանգամանքից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով:

Այս առումով կարևոր են անձի հուզական հասունությունը և ինքնաճանաչողության, ինքնագնահատման բարձր մակարդակը: Անձի ձևավորման գործում էական նշանակություն ունի այնպիսի արժեքներ կրելը, ինչպիսիք են՝ ազատությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը: Հենց այդ արժեքների վրա հիմնվող անձը կարող է դրսևորել պատասխանատու վարքագիծ՝ գիտակցելով իր քայլերի կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները:

Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցի՝ քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում:

բ) Առարկայի առանցքային գաղափարները, ծրագրի առանձնահատկությունները

Առարկայի առանցքային գաղափարներն են.

- *անհատ-հասարակություն փոխազդեցությունը,*
- *հասարակության էվոլյուցիան,*
- *հիմնարար արժեքների նշանակությունը,*
- *մարդկության գլոբալ հիմնախնդիրները:*

Հասարակագիտություն առարկայի առանձնահատկությունն այն է, որ բաղկացած է սոցիոլոգիա, հոգեբանություն, իրավագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն գիտակարգերից, ինչը հնարավորություն է տալիս հասարակական երևույթներն ընկալելու բազմակողմանիորեն և ինտեգրված եղանակով: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հասարակագիտական հարցերի մասին չկան միանշանակ տեսակետներ, վերջնական լուծումներ, ինչը սովորողների մեջ խնդիրները համակողմանի դիտարկելու, այլակարծությունը հանդուրժելու, հետազոտական և նախագծային մոտեցումներ զարգացնելու հնարավորություններ է ընձեռում:

Յուրաքանչյուր դասարանի համար ընտրված է մեկ գլխավոր թեմա, որի շուրջ կառուցվում է բովանդակությունը: Այդ թեմաներն են՝

7-րդ դասարան՝ «Մարդ»:

8-րդ դասարան՝ «Հասարակության հիմնասյուներ. արժեքներ և իրավունքներ»:

9-րդ դասարան՝ «Պետություն»:

10-րդ դասարան՝ «Հասարակագիտական մտքի հիմունքներ»:

11-րդ դասարան՝ «Պետական համակարգի իրավական, տնտեսական և քաղաքական բաղկացուցիչները»:

12-րդ դասարան՝ «Ինքնաճանաչողություն»:

Առարկայի դասավանդումը հիմնվում է 3 մոտեցման վրա.

1. Հասկացությունների և սկզբունքների ուսուցում, ինչը հնարավորություն կտա իմանալու առարկայի բովանդակությունը:
2. Հետազոտական ուսուցում, ինչը հնարավորություն կտա հասկանալու, որ բազմաթիվ խնդիրներ չունեն միանշանակ լուծումներ և անխուսափելի են մշտական որոնումները և ուսումնասիրությունների իրականացումը::
3. Նախագծային ուսուցում, ինչը նպատակ ունի զարգացնել թիմային աշխատանքի հմտություններ, առաջարկել խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ:

«Հասարակագիտություն» առարկայի առանցքային գաղափարների ուսուցումը հիմնվելու է հետևյալ մոտեցումների վրա.

- *Դասավանդման ընթացքում կիրառվելու է ինտեգրված մոտեցում, ինչը հնարավորություն է տալու թեմաները դիտարկելու փոխկապակցվածության մեջ:*
- *Կարևորվելու է պարույրի մոտեցումը, որը հնարավորություն է տալու առանցքային գաղափարներին անդրադառնալու շարունակաբար և բարդության տարբեր մակարդակներով:*
- *Միակողմանի մոտեցումից խուսափելու համար թեմաների ներկայացման հիմքում դրվելու է պատմական մոտեցումը, ինչը ենթադրում է ներկայացնել խնդրի մասին բոլոր կարևոր տեսությունների, մոտեցումների էվոլյուցիան:*

- Բովանդակության ներկայացումը հնարավորինս գերծ պահել կատեգորիկ մոտեցումներից, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան դրսևորելու մտածողության կարողունակություն, զարգացնելու որոշում կայացնելու և դիրքորոշում ունենալու հմտություններ:
- Առարկայի բովանդակությունը իրականության հետ կապելու համար ներառել հայ հասարակագիտական մտքի, արվեստի, գրականության ձեռքբերումները և Հայաստանի անցյալին ու ներկային վերաբերող օրինակները:

գ) Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների, գնահատման առանձնահատկությունների, եղանակների և ձևերի համառոտ նկարագրությունը

Ուսումնական գործընթացն իրականացվելու է խառը ուսուցման ձևաչափով (blended): Կիրառվելու են դեմ առ դեմ և առցանց ուսուցման եղանակները: Ուսուցումն իրականացվելու է համադասարանական, անհատական և փոքր խմբային աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում, ելնելով թեմայի բովանդակությունից, դասի նպատակից, դասարանի, սովորողների, քննարկվող հիմնախնդրի առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները.

- ուսումնական նյութի բացատրում,
- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ,
- աշխատանք տպագիր և էլեկտրոնային սկզբնաղբյուրների նյութերով՝ գիտական բազային գործիքների օգտագործմամբ (մեջբերումներ, հղումներ, ամփոփումներ, եզրակացություններ, առաջարկություններ):
- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն, աղբյուրների գնահատում և համադրում,
- հիմնախնդիրների հետազոտում,

- հանդիպումներ,
- մրցույթների անցկացում,
- հաշվետվությունների և էսսեների պատրաստում,
- բանավեճերի կազմակերպում,
- ՏՀՏ կիրառմամբ թվային գործիքների օգտագործում,
- դերային խաղեր,
- թղթապանակների պատրաստում, մեկնաբանում,
- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում,
- անդրադարձ ուսումնական գործունեությանը:

Գնահատման գործընթացում կարող են կիրառվել բազմաթիվ եղանակներ, բայց հիմնական շեշտը դրվելու է ձևավորող գնահատման վրա: Ձևավորող գնահատման ձևերից հատկապես կարևորվում է հետադարձ կապը, որը աշակերտների ձեռքբերումներն արձանագրելու և բացթողումների շտկման ուղիները գտնելու հնարավորություն է տալիս: Մեծ դասարաններում կարող է կիրառվել ձևավորող գնահատման ընդհանրական տարբերակը, երբ ուսուցիչն ամբողջ դասարանին ներկայացնում է սովորողների մոտ նկատվող տիպական սխալները: Փոքր դասարաններում կարող է կիրառվել անհատական հետադարձ կապի համակարգը:

Մեծ կարևորություն է տրվում գնահատման եղանակները դասավանդման մեթոդների հետ միասնության մեջ դիտարկելու մոտեցմանը: Գնահատումը չպետք է դիտարկվի դասավանդման մեթոդներից անջատ, քանի որ դա կարող է հանգեցրել գիտելիքների, հմտությունների ոչ համարժեք գնահատման: Կարող են կիրառվել գնահատման գրավոր և բանավոր եղանակներ:

9. Օրինակելի թեմատիկ պլան

Ստորև առաջարկում ենք օրինակելի թեմատիկ պլանի նմուշ, որը ձեզ կօգնի կազմել ձեր դպրոցին ու դասարանին համապատասխան պլան: Թեմատիկ պլանում կարող եք նաև ընդգրկել յուրաքանչյուր դասին օգտագործվող նյութերը, կիրառվող մեթոդները և այլն՝ ըստ անհրաժեշտության: Ներածական դասի, ամփոփիչ և պահեստային դասերի համար նախատեսել ենք ընդամենը 4 ժամ: Դրանք կարող եք օգտագործել թեմատիկ և գործնական աշխատանքների համար: Հիմնական նյութի մատուցման համար նախատեսված է ընդամենը 30 ժամ: Ընդ որում, դասագրքում առաջադրանքների բաժինների քանակը նույնպես 30 է: Ստորև ներկայացված է յուրաքանչյուր գլխի համար նախատեսված ամբողջական ժամաքանակը: Մենք նյութը բաժանել ենք ենթաթեմաների, որպեսզի այդ բովանդակային բաղադրիչները դուք կարողանաք հնարավորինս ճկուն բաշխել տվյալ գլխին հատկացված ժամերի միջև:

Կազմված է՝ հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի 8 սեպտեմբերի 2020 թ-ի N 28-Ն հրամանը ժամաքանակ՝ շաբաթական 1 ժամ (ընդամենը՝ 34 ժամ) *

Թեմա	Ենթաթեմա	Վերնագիր / վերջնարոյունքներ	Էջ	Նշումներ
	1.	Ներածական դաս		1 ժամ
1.		Մարդ և բնություն (7.1.1, 7.1.2, 7.1.3)		4 ժամ
1.1		Մարդը որպես բնության մաս, մարդու պահանջմունքները		
	1.	Մարդը՝ որպես բնության մաս: Մարդու պահանջմունքները	14	
	2.	Մարդու բնական, սոցիալական և հոգևոր պահանջմունքները	15	

1.2	Հասարակության ու բնության փոխհարաբերությունների էվոլյուցիան		
	1.	Ի՞նչ է հասարակությունը	18
	2.	Ի՞նչ է տեխնոլոգիան	19
	3.	Հասարակության զարգացման փուլերը և տեսակները (մինչարդյունաբերական հասարակություն, արդյունաբերական հասարակություն և հետարդյունաբերական հասարակություն)	19
1.3.	Բնություն և շրջակա միջավայր		
	1.	Շրջակա միջավայր (շրջավայր)	25
	2.	Բնապահպանություն և վերականգնվող էներգիա	26
2.	Մարդ և հասարակություն (7.2.1, 7.2.2, 7.2.3)		3 ժամ
2.1	Հասարակական կյանքի առանձնահատկությունները		
	1.	Հասարակությունը և հասարակական խմբերի ձևավորումը	30
	2.	Ֆեոդալական կամ ավատատիրական հասարակություն	31
	3.	Բազմամշակութային հասարակություն	32
	4.	Բնակչության պատմական աճը քաղաքներում	33
	5.	Սոցիալական շերտավորում	34
2.2	Տպագրության գյուտը և դրա հետևանքները		
	1.	Տպագրության գյուտը և գրագիտության աճն աշխարհում	36
	2.	Ի՞նչ է նշանակում գրագիտությունը	37
2.3.	Սոցիալականացում և սոցիալական խմբեր		

	1.	Սոցիալականացում	39	
	2.	Սոցիալական խմբեր, հասարակության սոցիալական կազմը	40	
3.		Մարդ, ճանաչողություն և վարքագիծ (7.3.1, 7.3.2, 7.3.3)		3 ժամ
3.1		Սոցիալական ճանաչողություն		
	1.	Սոցիալական ճանաչողություն և սոցիալական հոգեբանություն. ճանաչել սոցիալական միջավայրը	44	
	2.	Ինքնաշխատ (ավտոմատ) մտածողություն	46	
	3.	«Կոլեկտիվիստական» և «ինդիվիդուալիստական» մշակույթներ	47	
3.2		Վերաբերմունք և վարքագիծ		
	1.	Հիշողություն և վերաբերմունք	49	
	2.	Մեղիա կախվածություն	50	
3.3.		Հույզերի կառավարում և արդյունավետ հաղորդակցություն		
	1.	Տպագրության գյուտը և դրա հետևանքները. հույզերի տեսակները	52	
3.4.		Արդյունավետ հաղորդակցություն		
	1.	Հաղորդակցում	54	
	2.	Հաղորդակցման լեզու	55	
4.		Մարդ և բարոյականություն (7.4.1, 7.4.2, 7.4.3, 7.4.4)		4 ժամ
4.1		Բարոյականությունը և դրա գործառույթը		
	1.	Բարոյական նորմերի դերը	58	

	2.	Բարոյականությունը, կրոնը և օրենքը	58	
	3.	Բարոյական նորմերի փոփոխությունը	59	
	4.	Բարոյականության ոսկե կանոնը	61	
	5.	Մտունդը և բարոյականությունը	62	
4.2	Բարոյագիտությունը և բարոյականության հիմնական հասկացությունները			
	1.	Ի՞նչ է բարոյագիտությունը	63	
	2.	Բարոյականության սահմանումներ, ընդհանուրը և անհատականը	64	
	3.	Տարբեր մոտեցումներ բարոյականությանը (օրինակներ)	64	
	4.	Բարոյականության հիմնական հասկացությունները. ազատություն, պատասխանատվություն, հավասարություն և արդարություն	66	
4.3	Էզոիզմ և ալտրոիզմ			
	1.	Էզոիզմ և ալտրոիզմ (եսասիրություն և այլասիրություն)	70	
5.	Մարդ և գեղեցկություն (7.5.1, 7.5.2, 7.5.3)		4 ժամ	
5.1.	Ի՞նչ է գեղեցկությունը			
	1.	Գեղագիտություն. ի՞նչ է գեղեցկությունը	74	
	2.	Գեղեցկության մասին պատկերացումները	76	
	3.	Ի՞նչ է տգեղը	77	
5.2.	Գեղեցկությունն արվեստում և բնության մեջ			
	1.	Գեղեցկությունն արվեստում և բնության մեջ	79	
	2.	Գեղեցկությունն արվեստում	79	
	3.	Գեղեցկությունը բնության մեջ	83	

5.3.	Բարձր արվեստ և ցածր արվեստ		
	1.	Բարձր արվեստ և ցածր արվեստ	85
	2.	Դասական և հանրամատչելի երաժշտություն	86
	3.	Կերպարվեստ և լուսանկարչություն	86
5.4.	Ի՞նչ է ճաշակը. լավ ճաշակ և վատ ճաշակ		
	1.	Ի՞նչ է ճաշակը	88
	2.	Ի՞նչն է ազդում ճաշակի վրա	89
6.	Մարդ և իրավունք (7.6.1, 7.6.2, 7.6.3)		3 ժամ
6.1.	Ի՞նչ է իրավունքը		
	1.	Ի՞նչ է իրավունքը. իրավունքի իմաստն ու դերը	92
	2.	Իրավական հասունացման աստիճանները. իրավունակություն և գործունակություն	93
	3.	Իրավունքի ընկալումը տարբեր երկրներում	94
6.2.	Իրավական և բարոյական նորմեր		
	1.	Որո՞նք են իրավական և բարոյական նորմերը. պարտադիր և ոչ պարտադիր նորմեր	95
	2.	Իրավունքի աղբյուրները. նորմատիվ-իրավական ակտեր, իրավական սովորույթ ու նախադեպ	95
6.3.	Մարդու իրավունքների և ազատությունների պատմությունը		
	1.	Մարդու իրավունքների և ազատությունների պատմությունը.	97

		իրավունքների նվաճման ժամանակագրությունը		
	2.	Հիմնարար իրավունքների մասին հայկական առաջին նախագիծը	98	
	3.	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի. ո՞ր իրավունքներն են ամրագրված Հռչակագրում	99	
	4.	Իրավունքի նվաճման օրինակներ. կրթության իրավունք, առողջ չրջակա միջավայրում ապրելու իրավունք, Մաշտոցի պուրակի պայթաբը	100	
7.	Մարդ և տնտեսություն (7.7.1, 7.7.2, 7.7.3, 7.7.4)		6 ժամ	
7.1	Տնտեսության նշանակությունը մարդու կյանքում և մեր դերը տնտեսության մեջ			
	1.	Մեր դերը տնտեսության մեջ. մասնագիտության ընտրությունը՝ ելնելով հմտություններից, հետաքրքրություններից, անհատականությունից և արժեքներից (աշխատաշուկա)	104	
	2.	Տնտեսության 4 օղակները. արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում	108	
	3.	Փողի և փոխանակման ձևերը	111	
	4.	Տնտեսական 3 հիմնական հարցը. ի՞նչ արտադրել, ինչպե՞ս արտադրել և ո՞ւմ համար արտադրել	112	

	5.	Ինչպե՞ս իրականացնել բաշխումը	114	
7.2.	Մեր պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները			
	1.	Որո՞նք են պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները	116	
	2.	Ինչպե՞ս սահմանել առողջապահական կարիքը	118	
	3.	Սպառողականություն և սպառողական հասարակություն	119	
	4.	Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր (բնական և արհեստական սակավություն)	121	
7.3	Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողությունների դերը ներկայում և ապագայում			
	1.	Անձնական բյուջե, եկամտի բաշխում. եկամուտ և ծախս	125	
	2.	Անձնական բյուջեի պլանավորում. խնայողությունների դերը ներկայում և ապագայում	126	
8.	Մարդ և քաղաքականություն (7.8.1, 7.8.2)		3 ժամ	
8.1	Մարդը որպես քաղաքական էակ			
	1.	Քաղաք, համակեցություն և քաղաքականություն. մարդը որպես քաղաքական էակ	130	
	2.	Պետությունն ու անհատը	132	
8.2	Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում			

1.	Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում	134	
2.	Քաղաքական շահեր և համոզմունքներ. անհատները, միավորումները և կուսակցությունները քաղաքական պայքարում	134	
3.	Ներկայացուցչական ժողովրդավարության մասին	134	
4.	Քաղաքականության բովանդակությունը	137	
	Ամփոփում և պահուստային ժամեր		3 ժամ

*- առարկային տրամադրվող ժամաքանակը որոշվում է հենքային ուսումնական պլանի և Հաստատության ուսումնական պլանի հիման վրա, որը կազմվում է մեթոդմիավորման առաջարկությամբ և մանկավարժական խորհրդի որոշմամբ:

10. Դասագրքի բովանդակության մեկնաբանություն

Այս բաժնում մենք մանրամասն անդրադառնում ենք դասագրքի գլուխներում ընգրկված թեմատիկ բաղադրիչներին և դրանց մատուցման եղանակին:

Գլուխ 1. Մարդ և բնություն

Նպատակ

Ներկայացնել բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը օրինակների միջոցով: Բացատրել մարդու պահանջմունքները:

Վերջնարդյունք

7.1.1. Հիմնավորի բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում:

7.1.2. Նկարագրի մարդու պահանջմունքները:

7.1.3. Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:

1-ին գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Դասագրքի առաջին գլխի հիմնական նպատակներից մեկն է՝ օգնել, որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն բնապահպանական գիտակցություն, հոգատարություն և պատասխանատվություն բնության նկատմամբ, որպեսզի նրանք հասկանան մարդու պահանջմունքների բավարարման և բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի

միջև ներդաշնակության հասնելու անհրաժեշտությունը, գնահատեն բնության պահպանությանն ուղղված ժամանակակից նախաձեռնությունների կարևորությունը:

Այս գլուխը բաղկացած է երեք ենթաթեմայից: Առաջին ենթաթեման մարդու և բնության սերտ հարաբերությունների, ինչպես նաև մարդու պահանջմունքների մասին է: Ընդգծվում է մարդու՝ որպես կենսաբանական և սոցիալական էակի երկակի բնույթը: Մարդու սոցիալական բնույթին վերաբերվող հարցերը քննարկվում են հաջորդ գլխում: Այստեղ նկարագրվում են մարդու պահանջմունքների տեսակները՝ կենսաբանական, սոցիալական և մշակութային:

Պարզաբանվում է մարդու ակտիվ վերաբերմունքը բնության նկատմամբ՝ բնության պաշարները և ուժերը սեփական կարիքների համար օգտագործելու, բնությունը վերափոխելու, բնությունից կախվածությունը թուլացնելու և բնության նկատմամբ վերահսկողություն հաստատելու նպատակով, ինչը հանգեցնում է թե հասարակությունների զարգացման, թե բնության համար կործանարար հետևանքների:

Այս ենթաթեմայի առաջադրանքները կօգնեն ավելի լավ հասկանալ մարդու տարբեր տեսակի պահանջմունքները և դրանց բավարարման ձևերը, մտածել ժամանցի և զվարճության համար կենդանիների օգտագործման նպատակահարմարության մասին:

Երկրորդ ենթաթեման մարդու և բնության փոխհարաբերությունների էվոլյուցիան է: Այստեղ քննարկվում են հասարակությունների պատմական տեսակներ՝ մարդկության պատմությունը բաժանելով տևողությամբ անհավասար երեք ժամանակաշրջանների՝ մինչարդյունաբերական, արդյունաբերական և հետարդյունաբերական: Այստեղ

կարևոր է ուշադրություն դարձնել ժամանակակից հասարակությունների ձևավորման մեջ արդյունաբերական հեղափոխության խաղացած դերի վրա, ընդգծել դրա դրական, և բացասական հետևանքները: Անհրաժեշտ է ընդգծել, որ այս հեղափոխությունը տարբեր տարածաշրջաններում ու երկրներում տեղի չի ունեցել միաժամանակ և միանման հետևանքներով: Բայց այսօր կան ամբողջ աշխարհին, բոլոր հասարակություններին վերաբերող ընդհանուր խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է միասնական ջանքեր: Հատուկ ուշադրություն է դարձվել տեխնոլոգիաների զարգացման ընթացքի վրա: Անհրաժեշտ է թեման որոշակիացնել խորհրդային Հայաստանի փորձի վրա՝ քննարկելով Հայաստանի տնտեսական զարգացումն ու բնապահպանական խնդիրները:

Այս ենթաթեմային առաջադրանքները կօգնեն ավելի լավ ծանոթանալ տարբեր դարաշրջաններում և հասարակություններում մարդկանց օգտագործած գործիքներին, ինչպես նաև խորհրդային տարիներին եղած և այժմ Հայաստանում առկա արդյունաբերության ճյուղերի, դրանց հարուցած էկոլոգիական խնդիրների և այդ խնդիրների նկատմամբ հասարակության վերաբերմունքի մասին:

Երրորդ ենթաթեման սկսվում է՝ ուշադրություն հրավիրելով հասարակությունների կյանքում բնության խաղացած դերի տարբեր, այդ թվում՝ քաղաքական նշանակության վրա: Բնության պահպանման հարցը մեր օրերում սերտորեն կապված է էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման ծրագրերի հետ: Այս միտումը հատկապես կարևոր է Հայաստանի համար, որը չունի էներգիայի ավանդական միջոցների՝ նավթի և գազի պաշարներ: Այս ենթաթեմայի առաջադրանքները կօգնեն աշակերտներին ա-

վելի շատ բան իմանալ Հայաստանում եղած բնապահպանական շարժումների, ինչպես նաև վերականգնվող էներգիայի օգտագործման նախաձեռնությունների մասին:

Օգտագործված և լրացուցիչ գրականության նյութերը

Էլթոնի Գիդենս, Սոցիոլոգիա, 6-րդ հրատարակություն, Փոլիթի Փրեսս, Քեմբրիջ, 2009: Anthony Giddens, *Sociology*, Sixth Edition, Polity Press, Cambridge, 2009.

Նիլս Ֆրայթագ, Բնություն և շրջակա միջավայր, Եվրոպական պատմությունն առցանց, 2016: Nils Freytag, *Nature and Environment*, European History Online (EGO), 2016, <http://ieg-ego.eu/en/threads/backgrounds/nature-and-environment>.

Ռուդի Վոլթի, Հասարակություն և տեխնոլոգիական փոփոխություն, 8-րդ հրատարակություն, Ուորթ Փաբլիշերս, Նյու Յորք, 2017: Rudi Volti, *Society and Technological Change*, Eighth Edition, Worth Publishers, New York, 2017.

Հովհաննես Թումանյան, «Կազին ախպեր» հեքիաթ:

Ռաֆիկ Նահապետյան, Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2022, http://publishing.y-su.am/files/Rafik_Nahapetyan_2022-1.pdf :

Գլուխ 2. Մարդ և հասարակություն

Նպատակ

Ներկայացնել մարդու և հասարակության փոխկապվածությունը, հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու տարբերությունները:

Վերջնարդյունքներ

7.2.1. Մարդու էությունից բխեցնի խմբի և հասարակության անհրաժեշտությունը:

7.2.2. Տարբերակի հասարակության փոքր և մեծ խմբերը:

7.2.3. Ներկայացնի հասարակության սոցիալական կազմը:

2-րդ գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Այս գլխում նկարագրվում են ժամանակակից հասարակությունների ձևավորման պատմական ընթացքի և հասարակական կյանքի հիմնական կողմերը: Այն կօգնի աշակերտներին՝ պատկերացում կազմելու ժամանակակից հասարակությունների շերտավորման և սոցիալական կազմի, մարդու և հասարակության փոխկապվածության, երեխայի սոցիալականացման միջոցների ու առանձնահատկությունների մասին:

Գլուխը պարունակում է երեք ենթաթեմա: Առաջին ենթաթեման ներկայացնում է հասարակությունների զարգացման փուլերը և սոցիալական շերտավորման պատմական ընթացքը: Իհարկե, դա ընդհանրացված սխեմա է, որ առանձին հասարակությունների դեպքում կարիք ունի որոշակիացման և տեղայնացման: Ընդգծվում է արդյունաբերական հեղափոխության և արդի քաղաքների առաջացման կապը, հատուկ ուշադրություն է դարձվում սոցիալական անհավասարությունների և աղքատության հարցին: Առաջադրանքների օգնությամբ աշակերտները կհասկանան, թե ինչ է բազմամշակութային հասարակությունը և ինչպես է արտահայտվում մշակութային բազմազանություն:

Նը Հայաստանում, կիմանան մեր երկրում սոցիալական անհավասարության և աղքատության խնդրի տարբեր կողմերի մասին:

Երկրորդ ենթաթեման արդի հասարակությունների ձևավորմանը մեծ նպաստ բերած տեխնոլոգիայի՝ տպագրական հաստոցի և աշխարհով մեկ դրա տարածման համառոտ պատմությունն է: Առանց տպագրության գյուտի անհնար կլինեք գրագիտության աճը, գիտության, տեխնոլոգիաների ու մշակույթների բուռն զարգացումն ամբողջ աշխարհում: Կարևոր է ուշադրություն դարձնել ժամանակի ընթացքում «գրագիտության», գրագետ լինելու իմաստի փոխություններին, որոնք մասնավորապես կապվում են հաղորդակցության և պատկերման տեխնոլոգիաների առաջ գալու հետ՝ լուսանկարչական սարքից մինչև բջջային հեռախոսներ: Առաջադրանքների այս խումբը աշակերտներին կօգնի ծանոթանալ տպագրական գործի որոշ կողմերի, առաջին հայերեն գրքերի տպագրության պատմությանը, իմանալ «գրագիտություն» բառի ժամանակակից գործածության լայն շրջանակի մասին:

Երրորդ ենթաթեման հասարակության սոցիալական կազմն է, մարդու սոցիալականացման ընթացքը և դրա եղանակները: Հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ հատկապես ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում մարդուց սոցիալականացման ջանքեր պահանջվում են ամբողջ կյանքի ընթացքում: Նկարագրվում են մեծ և փոքր, առաջնային և երկրորդային խմբերը, բերվում են դրանց օրինակներ: Ընդգծվում է այն կարևոր դերը, որ հասարակության կյանքում խաղում են տարբեր տեսակի կազմակերպությունները: Առաջադրանքների օգնությամբ աշակերտներն ավելի լավ կհասկանան առաջնային և երկրորդային

խմբերի հատկությունները, այդ խմբերի միջև առկա տարբերությունները և երկրորդային խմբի՝ առաջնային խմբի նմանվելու հնարավորությունը :

Քննարկեք, թե որ երկրներում կան մեծաքանակ հայկական համայնքներ և ինչպե՞ս է արտահայտվում նրանց մասնակցությունը այդ հասարակությունների կյանքում: /Յայտց լեզուն կամ հայ ժողովրդի պատմությունը, մասնավորապես հայոց ցեղասպանության պատմության ընդունումը որպես դպրոցական առարկա որոշ երկրներում, ցեղասպանության ընդգրկումը հիշատակության օրերի մեջ:

Օգտագործված և լրացուցիչ գրականության հետևյալ նյութերը

Էսթոնի Գիդենս, Սոցիոլոգիա:

6-րդ հրատարակություն, Փոլիթի Փրեսս, Քեմբրիջ, 2009: Anthony Giddens, *Sociology, Sixth Edition*, Polity Press, Cambridge, 2009.

Թոնյա Քոներլի, Քեթլին Հոլմս, Աշա Լալ Թամանգ, Սոցիոլոգիայի ներածություն, 3-րդ հրատարակություն, Օփենսթաքս, Ռայս համալսարան, Յյուսթոն, Տեխաս, 2021: Tonja R. Conerly, Kathleen Holmes, Asha Lal Tamang, *Introduction to Sociology, Third Edition*, OpenStax, Rice University, Houston, Texas, 2021.

Ռուդի Վոլտի, Հասարակություն և տեխնոլոգիական փոփոխություն, 8-րդ հրատարակություն, Ուորթ Փաբլիշերս, Նյու Յորք, 2017: Rudi Volti, *Society and Technological Change, Eighth Edition*, Worth Publishers, New York, 2017.

Մարկ Աբադի, Մարդկության պատմության 16 մեծագույն քաղաքները՝ հին երիթովից մինչև ժամանակակից Տոկիո,

2018: Mark Abadi, The 16 greatest cities in human history, from ancient Jericho to modern Tokyo, 2018.

Գլուխ 3. Մարդ, ճանաչողություն և վարքագիծ

Նպատակ

Բացատրել ճանաչողության, սոցիալական հմտությունների, հույզերի, վարքագծի, արդյունավետ հաղորդակցման կարևորությունը մարդու կյանքում և որոշակի օրինակների ու իրավիճակների վերլուծության միջոցով զարգացնել ինքնաճանաչողությունը և իրավիճակին համարժեք արձագանքելու հմտությունները:

Վերջնարդյունք

7.3.1. Մեկնաբանի ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում:

7.3.2. Վերլուծի սեփական հույզերը, մտքերը, թվարկի հույզերի կառավարման հնարներ:

7.3.4. Բացատրի արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը:

3-րդ գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Այս գլխում քննարկվում են մարդու՝ որպես հասարակական էակի գոյության համար անհրաժեշտ մի շարք ունակություններ՝ ճանաչողությունից ու հույզերի կառավարումից մինչև արդյունավետ հաղորդակցում: Պարզաբանվում են այդ ունակությունների նշանակությունն ու ձևավորման

պայմանները: Այս գլխի օգնությամբ աշակերտները շատ բան կիմանան սոցիալական կյանքի բնույթի և այդ կյանքի գործուն մասնակից դառնալու ուղիների մասին:

Գլուխը պարունակում է երեք ենթաթեմա: Առաջինը վերաբերում է սոցիալական ճանաչողության հարցին: Նախ՝ դիտարկվում է այսպես կոչված ինքնաշխատ կամ ավտոմատ մտածողությունը և դրա ձևավորման ընթացքը: Մտածողության այս ձևը մարդու համար շատ կարևոր է սոցիալական աշխարհը մեկնաբանելու, տարբեր իրադրություններում կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ ընդունելու տեսանկյունից: Ընդգծվում է սովորելու կամ ուսանելու ընդունակության սկզբունքային նշանակությունը մարդու համար, որտեղ սովորելը սահմանվում է առավել լայն իմաստով: Համառոտ ձևով քննարկվում են սովորելու տեսակները: Այս ենթաթեմայի առաջադրանքները կօգնեն աշակերտներին՝ ավելի լավ հասկանալ մտածելու և սովորելու տեսակները, տարբերակել սոցիալական տարբեր միջավայրերի ներդրումը ճանաչողության մեջ, գնահատել մշակութային տարբերությունների դերը սոցիալական ճանաչողության ձևավորման գործում:

Երկրորդ ենթաթեման վերաբերմունքի և վարքագծի փոխհարաբերության մասին է: Բացատրվում է, թե ինչպես են ձևավորվում մարդու վերաբերմունքները տարբեր բաների՝ մարդկանց, իրադարձությունների, գաղափարների և այլնի նկատմամբ: Վերջին հաշվով՝ դրանք ճանաչողության և դրա վրա հիմնված դրական կամ բացասական գնահատականների արդյունք են: Ընդգծվում է այն հանգամանքը, որ, չնայած վերաբերմունքի և վարքագծի միջև ուղղակի կապի մասին ընդունված կարծիքին, դրանց փոխհարաբերությունն ավելի բարդ է: Մարդու վարքագիծն ավելի մեծ չափով կարող է որոշվել արտաքին սոցիալական ազդեցու-

թյուններով, քան նրա վերաբերմունքով: Առաջադրանքները մասնավորապես թույլ են տալիս քննարկել աշակերտների վերաբերմունքների ձևավորման վրա մեդիայի ազդեցության հարցը:

Վերջին ենթաթեման հույզերի կառավարումը և արդյունավետ հաղորդակցումն է: Ճանաչողությունից անբաժան է ինքնաճանաչողությունը, որի կարևոր եղանակը ինքնադիտումն է սեփական մտքերին և ապրումներին հետևելու միջոցով: Ինքնաճանաչողության կարևոր արդյունքն է սեփական հույզերը ճանաչելու և վերահսկելու ունակությունը: Ընդգծվում է հույզերի նշանակությունը մարդու կյանքում և նրա մտավոր գործունեության համար՝ ուշադրություն հրավիրելով դրանց կառուցողական և ապակառուցողական դերերի վրա: Նկարագրվում է ընդհանուր մոտեցում, թե ինչպես կարելի է սովորել «կարդալ» և կառավարել սեփական հույզերը:

Պարզաբանվում է արդյունավետ հաղորդակցման՝ որպես կարևորագույն սոցիալական հմտության դերը մարդու հաջող գործունեության համար: Այն ներառում է տարբեր հմտություններ, բայց հիմնականը լեզվի իմացությունն է՝ բանավոր և գրավոր: Ընդգծվում է նաև մարմնի լեզվի՝ որպես հաղորդակցության մեկ այլ միջոցի նշանակությունը: Երկու խմբով ներկայացվող առաջադրանքները կօգնեն աշակերտներին՝ ավելի լավ գնահատել հույզերի կառավարման ունակության կարևորությունը, ուշադրություն դարձնել այն փաստի վրա, որ տարբեր միջավայրերում մարդիկ օգտագործում են լեզվի տարբեր շերտեր, և դա թելադրված է նաև հաղորդակցման արդյունավետության նկատառումներով:

Օգտագործված և լրացուցիչ գրականության հետևյալ նյութերը

Դեյվիդ Մայերս, Սոցիալական հոգեբանություն, 10-րդ հրատարակություն, ՄաքԳրոու-Հիլլ, Նյու Յորք, 2010: David G. Myers, Social Psychology, Tenth Edition, McGraw-Hill, New York, 2010.

Էլիոթ Արոնսոն, Թիմոթի Ուիլսոն, Ռոբին Աքերթ, Սեմյուել Սոմերս, Սոցիալական հոգեբանություն, 9-րդ հրատարակություն, Փեարսոն, Բոստոն, 2016: Elliot Aronson, Timothy D. Wilson, Robin M. Akert, Samuel R. Sommers, Social Psychology, Ninth Edition, PEARSON, Boston, 2016.

Չարլզ Սթենջր և Ջենիֆեր Վոլինգա, Հոգեբանության ներածություն, Վիկտորիա, Բ.Ս., ԲՍքամփուս, 2014: Charles Stangor and Jennifer Walinga, Introduction to Psychology, Victoria, B.C., Campus, 2014.

Հոգեբանության ներածություն, Մինեսոտայի համալսարանի գրադարանների հրատարակչություն, Մինեսոպոլիս, 2015: Introduction to Psychology, University of Minnesota Libraries Publishing Edition, Minneapolis, 2015.

Գլուխ 4. Մարդ և բարոյականություն

Նպատակ

Ներկայացնել բարոյական նորմերի անհրաժեշտությունը, բացատրել բարոյագիտության առանցքային հասկացությունները: Ձարգացնել բարոյական դատողություններ անելու կարողությունը՝ որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով:

Վերջնարդյունք

7.4.1. Հիմնավորի բարոյական նորմերի անհրաժեշտությունը:

7.4.2. Վերլուծի բարոյականության ոսկե կանոնը:

7.4.3. Մեկնաբանի բարոյականության հիմնական հասկացությունները:

7.4.4. Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրուիզմը:

4-րդ գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Այս գլուխն ուսուցանելիս հատկապես կարևոր է աշակերտներին բացատրել տարբեր բաղադրիչների միջև կապը: Օրինակ՝ բարոյականության, կրոնի և օրենքի մասին հատվածում, որ նշանակված է Ն1., հստակ բացատրված է դրանց տարբերությունը, բայց օրինակներ բերված չեն: Փոխարենը Ն2.-ը, որտեղ նկարագրված է տղամարդկանց կարճ տաբատ կրելու հարցը, հենց լավագույնս նկարագրում և շարունակում է նախորդ թեման: Օրենքով տղամարդկանց արգելված չէր հանրային վայրերում կարճ տաբատ կրելը, բայց բարոյական նորմերից ելնելով նրանք դա չէին անում, այսինքն՝ մենք ունեինք մի դեպք, երբ օրենքը և բարոյականությունը տարբերվում էին իրարից: Սակայն երբ տղամարդիկ սկսեցին հագնել կարճ տաբատ, օրենքը և բարոյականությունը սկսեցին համընկնել: Այստեղ նաև կարևոր է աշակերտներին հուշել փոփոխության պատճառները՝ զբոսաշրջիկների ազդեցությունը, արտասահմանում բնակվող և վերադարձող հայաստանցիների ազդեցությունը:

Նույնկերպ կարելի է կրոնի հետ կապված օրինակներ բերել . պահքի օրերին քրիստոնեությունը արգելում է կենդանական սնունդ օգտագործել, սակայն Հայաստանում բարոյապես նորմալ է համարվում պահքի օրերին կենդանական սննդի գործածումը, և շատ քիչ մարդիկ են հետևում պահքին . այստեղ կրոնը և բարոյական նորմերը հակասում են իրար, օրենքը նույնպես չի արգելում կենդանական սնունդ օգտագործել պահքի ժամանակ: Իսկ ահա օրենքը, բարոյականությունը և կրոնը միաժամանակ արգելում են մարդ սպանել՝ այս դեպքում երեքն էլ համընկնում են:

Թեմայում կարևոր նշանակություն ունի բարոյականության ոսկե կանոնը, որ մանրամասն քննարկվում է: Դրան հաջորդում է սննդի մեջ կենդանիների մսի օգտագործման թեման: Ուսուցիչը պետք է ցույց տա այդ երկու թեմայի կապը և աշխակերտներին գլխի գցի, թե որ կենդանիների նկատմամբ է կիրառելի ոսկե կանոնը: Հատկապես հիմա, երբ ՀՀ օրենսդրությամբ պատիժ է սահմանվել կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի համար, տեղին է այս թեման օգտագործել՝ աշխակերտների մոտ կենդանիների նկատմամբ բարի վերաբերմունք սերմանելու, բարոյականության ոսկե կանոնը ոչ միայն մարդկանց նկատմամբ կիրառելու, այլև կենդանիների նկատմամբ կիրառելու համար:

Օրինակելի դասապլան

Այս բաժնի համար ներկայացնում ենք օրինակելի դասապլան, որը կարող է օգտագործվել մյուս թեմաների նախապատրաստման համար:

Դասաժամի առանձին գործողությունների աղյուսակ
Ուսուցիչ (ՌԻ), Աշակերտ (Ա)

Թեմա՝ Բարոյականության ոսկե կանոնը:
Մտնունդը և բարոյականությունը

Ժամանակ/դիրքակտիկ փուլ	Ուսուցչի գործողություն	Աշակերտի գործողություն	Աշխատանք	Նյութ/նշումներ
<p>10 րոպե Առաջ-նորդել/ Ակտիվացնել</p> <p>Կողմնորոշել դեպի նպատակ</p> <p>Ուղղորդել</p>	<p>Ու-ն ողջունում է դասարանին, առաջարկում յուրաքանչյուրին արկղից վերցնել թերթիկ և նստել համապատասխան պատկերով (կենդանիներ՝ շուն, կով, օձ, Նապատաստակ) սեղանի մոտ, ապա վերցնել սեղաններից դրված փազլը (նկարներ, որոնց հիմքում բարոյականության ոսկե կանոնն է) և ու-ի հրահանգից հետո հավաքել այն:</p> <p>Ուսուցիչը անդրադառնում է բարոյականության ոսկե կանոնին և խոսում</p>	<p>Ա-ները ողջունում են ուսուցչին, վերցնում արկղիկից կենդանիների պատկերներով թերթիկները և նստում համապատասխան պատկերով սեղանի մոտ: Ու-ի հրահանգից հետո հավաքում են փազլը և մեկնաբանում հավաքված պատկերների իմաստը:</p> <p>Ա-ները լսում են, եթե առաջանում են հարցեր, բարձրաձայնում են:</p> <p>Ա-ները կարող են հարցեր տալ, միանում են խմբային աշխատանքին:</p>	<p>Ուսուցչի խոսք, խմբային աշխատանք, վարժություն փազլ</p>	<p>Power Point (կյութի տեսասահիկ), կենդանիների պատկերներով լցված արկղ, սեղաններին տեղադրված կենդանիների պատկերներ փազլ</p> <p>Power Point, կենտրոններով աշխատանքի թղթեր</p>

	<p>դասաժամի Նպատակի մասին</p> <p>Օգտագործվում է կենտրոններով աշխատանք մեթոդը՝ թողնելով Նախապես ձևավորված խմբերը Նույնը, միայն թե յուրաքանչյուր խմբի տալիս է Նոր առաջադրանք (ցանկության դեպքում Ու-ը կարող է ձևավորել Նոր խմբեր): Ու-ը խթանում է առաջադրանքի հստակեցումը:</p>			
<p>15 րոպե Մշակում</p>	<p>Ու-ը ստանձնում է խորհրդատուի դեր, մոտենում է խմբերին և անհրաժեշտությա ն դեպքում օգնում: Ու-ը քաջալերում է Ա-ներին ժամանակը ճիշտ օգտագործել, կատարել խմբի ներսում աշխատանքի բաժանում, ընտրել պատասխանատու, ժամապահ:</p>	<p>«Բացահայտողների կենտրոնը» ընթերցում է տեքստը, կատարում Նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը և ներկայացնում ընկերներին: «Չետագոտողների կենտրոնը» ընթերցում է տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացնել հետաքրքիր Նյութեր հայթայթել տեստի վերաբերյալ:</p>	<p>Խմբա- յին աշխա- տանք Անհա- տա- կան աշխա- տանք</p>	<p>Նյութեր յուրաքանչ յուր խմբի սեղանի համար, թուղթ, մարկեր, պլանշետ կամ հեռախոս, համացանց g</p>

		<p>«Ստեղծագործողների կենտրոնը» տեքստի առանձնահատկությունները րից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում և այլն:</p> <p>«Գրավոր աշխատանքի կենտրոնը» ընթերցում է տեքստը և իրականացնում է լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան:</p>		
8 թույն Անդրադարձ	<p>Ու-ը անցում է կատարում դասաժամի մյուս հատվածին: Հանձնարարում է Ա-ներին ներկայացնել իրենց խմբային աշխատանքների արդյունքները (յուրաքանչյուրին 2 թույն)</p>	<p>Յուրաքանչյուր աշխատանքային կենտրոն ներկայացնում է իր ուսումնասիրած նյութը ըստ առաջադրանքի պահանջի</p>	<p>Ուսուցչի խոսք, խմբային աշխատանք, անհատական աշխատանք</p>	
10 թույն Կիրառում	<p>Ու-ը հստակեցնում է Ֆրայերի մոդելը, բաժանում է թղթերը:</p>	<p>Ա-ները լրացնում են Ֆրայերի մոդելով թղթերը</p>	<p>Ուսուցչի խոսք, Ֆրայերի մոդել</p>	<p>A4 թղթերի վրա ունենալ Ֆրայերի մոդելը յուրաքանչյուր աշակերտի համար</p>

<p>2 թույլտվություն</p> <p>Ամփոփում և հեռանկար</p>	<p>Ուժ ամփոփում է դասը, դասի նպատակներին համնելու ուղիները, հանձնարարում առաջադրանք և համառոտ ներկայացնում հաջորդ դասաժամի բովանդակությունը</p>	<p>Ա-ները լսում են, ընթացքում կատարում նշումներ</p>	<p>Ուսուցչի խոսք</p>	<p>Դասագիրք, թղթեր</p>
--	---	---	----------------------	------------------------

Օգտագործված և լրացուցիչ գրականության հետևյալ նյութերը

Արշակ Բալայանի «Բարոյագիտություն» դասախոսությունների շարքը, Բուն TV:

Սթենֆորդի փիլիսոփայական հանրագիտարան:

Բրիտանիկա հանրագիտարան:

Գլուխ 5. Մարդ և գեղեցկություն

Նպատակ

Զարգացնել գեղագիտական ճաշակ ու պատկերավոր խոսք՝ բնութագրելու գեղեցիկն ու տգեղը դրանք դիտարկելով, բնության, հասարակության և մշակույթի համատեքստում:

Վերջնարդյունք

7.5.1.Ներկայացնի «գեղեցիկ» հասկացությունը և իրեն շրջապատող իրերի

գեղեցկությունը:

7.5.2. Մեկնաբանի պատասխանատվության իր բաժինը գեղեցիկի

պահպանման գործում:

7.5.3. Արվեստի գործերից օրինակներ բերի գեղագիտական հիմնական

հասկացությունները մեկնաբանելիս:

5-րդ գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Այս գլխում քննարկվում են գեղեցկությանը և մարդու՝ գեղեցկությունը ընկալելու ունակությանը վերաբերող մի խումբ հարցեր: Խոսվում է տարբեր քաղաքակրթություններում գեղեցկության պաշտամունքի երկար պատմության մասին, իսկ մյուս կողմից՝ ընդգծվում գեղեցկություն հասկացության բազմակողմանի բնույթը: Ընդգծվում է, որ այն մենք գտնում ենք ոչ միայն բնության մեջ և արվեստի գործերում, այլև մեր շուրջը՝ ամենօրյա կյանքում: Այնուհետև դիտարկվում են գեղեցկության պատճառած հաճույքը, գեղեցկությունը գնահատողների ճաշակը և հաճույքի ու ճաշակի տեսակները:

Գլուխը պարունակում է չորս ենթաթեմա: Նախ՝ համառոտ ձևով ուրվագծվում է «գեղեցիկություն» և «գեղեցիկ» (ևս «տգեղ») բառերի իմաստային շրջանակը: Մատնանշվում է գեղեցկության, դրա հարուցած դրական հույզերի Նշանակությունը մարդու առօրյա կյանքում: Նշվում է, որ գեղեցկությունը մեկնաբանելու և բնութագրելու փորձերը սկիզբ են առնել հին Հունաստանում և շարունակվել պատմության հետագա ընթացքում: Բայց անհրաժեշտ է ընդգծել, որ գեղեցկության հարուցած հաճույքը տարբերակելու, ինչպես նաև գեղեցիկ համարվող առարկայի առավել բնութագրա-

կան հատկությունները առանձնացնելու և դրանով իսկ՝ գեղեցկությունը սահմանելու փորձերը համոզիչ արդյունք չեն տվել: Առաջադրանքները թույլ են տալիս ավելի մանրամասնորեն քննարկել և հասկանալ գեղեցկության տարբեր իմաստները:

Երկրորդ ենթաթեման գեղեցկությունն է արվեստում և բնության մեջ: Ընդունված է համարել, որ գեղեցկությունն առավել կատարյալ ձևով արտահայտվում է արվեստի գործերում: Այս համոզմունքի առաջին հիմնավորումը ևս գտնում ենք հին Հունաստանում: Հարկ է սակայն ընդգծել, որ գեղեցկության չափանիշները տարբեր մշակույթներում տարբեր են: Մյուս կողմից՝ գեղեցկության մասին պատկերացումները փոխվում են ժամանակի ընթացքում: Թեև քսաներորդ դարի արվեստում գեղեցկությունը, կարելի է ասել, մղվեց երկրորդ պլան, արվեստի գեղեցկությունն այսօր էլ շարունակում է կարևոր դեր խաղալ մարդկանց կյանքում: Բնության գեղեցկության նկատմամբ առաջ եկած նոր հետաքրքրությունը կապվում է բնապահպանական շարժումների առաջացման հետ քսաներորդ դարի երկրորդ կեսին: Ընդգծվում է բնության նկատմամբ գոյություն ունեցող սպառողական վերաբերմունքը քննադատաբար գնահատելու անհրաժեշտությունը: Երկու խմբով բերվող առաջադրանքները թույլ են տալիս նորից անդրադառնալ քննարկվող հիմնական հարցերին և հասկանալ, օրինակ, թե որքան տարբեր ձևերով կարող է մեկնաբանվել ազգային էպոսի գլխավոր հերոսի՝ Սասունցի Դավթի կերպարը տարբեր արվեստագետների կողմից կամ որքան տարբեր կարող են լինել նկարիչների՝ Հայաստանի բնության ընկալումները, որ արտահայտվում են բնանկարներում:

Երրորդ ենթաթեման «բարձր արվեստի» և «ցածր արվեստի» (հանրամատչելի, զանգվածային արվեստի) փոխհարաբերությունը և դրանց տարբերակման հնարավորության

հարցն է: Այս թեման որոշակիացվում է դասական երաժշտության և հանրամատչելի երաժշտության, ապա նաև գեղանկարչության և լուսանկարչության փոխհարաբերությունը քննարկելով, որին նպաստում են նաև այս ենթաթեմայի առաջադրանքները:

Վերջին ենթաթեման ճաշակն է, լավ ճաշակի ու վատ ճաշակի տարբերակումը և հարցը, թե ինչն է ազդում ճաշակի ձևավորման վրա: Առաջադրանքները թույլ են տալիս աշակերտներին խորհել արվեստի հետ իրենց փոխհարաբերության մասին, գնահատել սեփական ճաշակը և այն որոշող հանգամանքները:

Օգտագործված և լրացուցիչ գրականության հետևյալ նյութերը

Բերիս Գոութ և Դոմինիկ Մաքիվեր Լոպես (խմբ.), Գեղագիտության հարցերի մասին, Լոնդոն և Նյու Յորք, Ռաութլիջ, 2005: Berys Gaut and Dominic McIver Lopes (eds.), *The Routledge Companion to Aesthetics*, London and New York, Routledge, 2005.

Գորդոն Գրեյիեմ, Արվեստների փիլիսոփայություն. գեղագիտության ներածություն, 3-րդ հրատարակություն, Լոնդոն և Նյու Յորք, Ռաութլիջ, 2005: Gordon Graham, *Philosophy of the Arts: An Introduction to Aesthetics*, Third Edition, London and New York, Routledge, 2005.

Վալերի Վինո (խմբ.), Փիլիսոփայության ներածություն. գեղագիտական տեսություն և պրակտիկա, Ռեբուս համայնք, 2021: Valery Vino (ed.), *Introduction to Philosophy: Aesthetic Theory and Practice*, The Rebus Community, 2021, <https://press.rebus.community/intro-to-phil-aesthetics/>.

Թեմա 6. Մարդ և իրավունք

Նպատակ

Ներկայացնել մարդկանց համակեցության համար անհրաժեշտ և նրանց վարքագիծը

կարգավորող իրավունքի կարևորությունը: Զարգացնել դրանց վերաբերյալ վերլուծական հմտություններ ու վերաբերմունք:

Վերջնարդյունք

7.6.1. Բացատրի իրավունք հասկացության իմաստը և դերը մարդու կյանքում:

7.6.2. Տարբերակի իրավական և բարոյական նորմերը::

7.6.3.Ներկայացնի իրավունքի աղբյուրները՝ նորմատիվ իրավական ակտ, իրավական սովորույթ, նախադեպ:

6-րդ գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Այս գլխում ներկայացվում են իրավունքի սահմանմանը, պատմական զարգացման ճանապարհին, դրա տարբեր ընկալումներին ու դրսևորումներին առնչվող հարցեր: Սկզբում խոսվում է «իրավունք» հասկացության իմաստի մասին: Ներկայացված պատկերների միջոցով այդ նպատակով ներածական մտազրոհի հնարավորություն է ստեղծվում, ինչից հետո կարելի է խոսել մեր կյանքում կանոնների և պայմանավորվածությունների դերի, ինչպես նաև համակեցության կանոնների մասին: Առաջադրանքները լայն հնարավորություն են ստեղծում վերհանել սովորողների պատկերացումները իրավունքի մասին և դրանց շուրջ կազմակերպել խմբային աշխատանք:

Իրավական հասունացման թեմատիկ հատվածը կիրառական նշանակություն ունի սովորողների համար և ցույց է տալիս տարիքի հետ երեխաների իրավունքների ավելացումն ու ծնողների պարտականությունների նվազումը: Այս բաժնի միջոցով անհրաժեշտ է ընգծել իրավունքներին գուգահեռ պատասխանատվության մեծացումն, ինչպես նաև գիտելիքներ փոխանցել իրավունակության ու գործունակության մասին: Քննարկման հարցերը կարող են վերաբերել այս կարգավորումների ընկալումներին տարբեր երկրներում: Կարելի է քննարկել նաև իրավունքի և իրավագիտակցության հարցերը առաջարկվող գրական գործերում:

Բովանդակային հաջորդ հատվածը հնարավորություն է ընձեռում անդրադառնալ իրավական և բարոյական (պարտադիր և ոչ պարտադիր) նորմերի տարբերակմանը: Բացի այդ, ներկայացվում են իրավունքի աղբյուրները՝ նորմատիվ-իրավական ակտերը, իրավական սովորույթն ու նախադեպը: Դրանք արդյունավետ բացատրելու համար խորհուրդ է տրվում բերել գործնական օրինակներ:

Այնուհետև ամփոփ տեքստի և նյութերի միջոցով փոխանցվում է մարդու իրավունքների պատմությունը, որը խորհուրդ է տրվում ներկայացնել որպես իրավունքների նվաճման շարունակական գործընթաց: Այստեղ անդրադարձել ենք իրավունքների առաջին փաստաթղթերին՝ անտիկ շրջանից մինչև մեր օրերը: Կարևոր է, որպեսզի սովորողները հիմնական այս հիմնարար գիտելիքն ու կարողանան քննադատաբար վերլուծել և դիրքորոշում հայտնել այս հռչակագրերի մասին: Դրանց շարքում է նաև Շահամիր Շահամիրյանի (1723-1798) «Որոգայթ փառաց» փաստաթուղթը, որն արտացոլում է հայ լուսավորության առաջադիմական գաղափարներն ու սահմանադրական պետության դրույթները:

Վերջում կա անդրադարձ առողջ շրջակա միջավայրի հասանելիության իրավունքին և կրթության իրավունքին: Բացի այդ, Մաշտոցի պուրակի պայքարի օրինակով ներկայացվում է իրավունքի նվաճման օրինակ մեր ոչ վաղ անցյալից: Այս և նման օրինակները կարող են շոշափելի դարձնել սովորողների ընկալումներն իրավունքի մասին և ծառայել որպես հարմար նյութ՝ նախագծային աշխատանքի համար:

Օգտագործված և լրացուցիչ գրականության հետևյալ նյութերը

Շահամիր Շահամիրյան, «Որոգայթ Փառաց», սահմանադրության առաջին տպագիր նախագիծը հայ իրականության մեջ, Մադրաս 1773 թ.:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (10-ը դեկտեմբերի, 1948թ.)

ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է 1995 թ.-ին, փոփոխվել է 2005 թ.-ին և 2015 թ.-ին):

ՀՀ օրենք Երեխայի իրավունքների մասին (29-ը մայիսի 1996 թ.):

ՀՀ Ընտանեկան օրենսգիրք (9-ը նոյեմբերի, 2004 թ.):

Հովհաննես Թումանյան, «Իմ ընկեր Նետոն» պատմվածք:

Թեմա 7. Մարդ և տնտեսություն

Նպատակ

Բացատրել, թե ինչպես կարելի է համադրել իրենց և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները առկա ռեսուրսների հետ: Մեկնաբանել սակավության հիմնախնդիրը: Նկարագրել արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները, խնայողությունների դերը ներկա և ապագա կյանքում:

Վերջնարդյունք

7.7.1. Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից:

7.7.2. Նկարագրի արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները:

7.7.3. Համադրի անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորի բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը:

7.7.4. Բացատրի ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:

7-րդ գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Օգտակար կլինի 7-րդ դասարանի աշակերտին այդ տարիքից սկսած բացատրել, որ իր դերը տնտեսության մեջ մեծապես կախված է այն մասնագիտությունից, որը նա կընտրի ապագայում: Դրան է միտված այս գլխի առաջին մասը:

Այնուհետև կարևոր է աշակերտներին բացատրել, թե ինչ դեր ունի մարդն ամբողջ տնտեսական գործընթացի մեջ, ինչպես է նույն մարդը միաժամանակ հանդես գալիս իբրև արտադրող և սպառող: Դրան կնպաստեն ինչպես դասի տեքստը, այնպես էլ պատկերները. մասնավորապես՝ բացվածքը նկարի միջոցով ցույց է տալիս տնտեսական գործընթացի տարբեր օղակները, իսկ «Արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում» ենթագլխում տեղ գտած պատկերը նույն բանը ցույց տալիս արդեն բառերի մակարդակում: Ուսուցիչը կարող է օգտագործել այս երկու պատկերի համեմատությունը դասն ավելի ընկալելի դարձնելու համար:

Իսկ «Տնտեսական 3 հիմնական հարցը» նյութը նույն բանը կրկնում է արդեն պրակտիկական տեսանկյունից. նյութի աղյուսակը լրացնելիս աշակերտները պետք է պրակտիկալում կիրառեն իրենց ստացած տեսական գիտելիքը:

Գլխի երկրորդ՝ «Մեր պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները» ենթագլխի հիմնական նպատակն է աշակերտներին սովորեցնել զատել առաջնայինը երկրորդականից, եղած գումարը նախ ծախսել անհրաժեշտ բաների վրա, հետո միայն ուշադրություն դարձնել երկրորդական բաներին:

«Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր» ենթագլուխն անդրադառնում է այն բանին, որ մեր տնտեսական որոշումները շատ դեպքերում կախված են ռեսուրսների սակավությունից, այլ ոչ թե մեր ցանկություններից: Այստեղ կարևոր է աշակերտներին բացատրել, որ որոշումներ կայացնելիս հարկավոր է գնահատել եղած իրական ռեսուրսները և հնարավորությունները, չափազանցված դեր չհատկացնել սեփական ցանկություններին:

Սակայն նույնքան կարևոր է սովորեցնել, որ սակավությունը հասարակության մեջ ինքնին գոյություն ունեցող երևույթ է, այլ հաճախ ստեղծվում է շուկայի գործունեության արդյունքում: Կարևոր է, որ աշակերտները հալած յուրի տեղ չընդունեն իրենց հանդիպող բառերն ու հասկացությունները, այլ դրանց մոտենան քննադատական մտածողության դիրքից . դրան կնպաստի «Սակավության այլընտրանքային մեկնաբանություն» նյութը:

Իսկ գլխի վերջին՝ «Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողությունների դերը ներկայում և ապագայում» ենթագլուխն ավելի շատ հետապնդում է գործնական նպատակներ և միտված է աշակերտներին սովորեցնել եղած ռեսուրսների վերաբերյալ հաշվարկներ կատարել: Եթե դասագրքի օրինակներն ու առաջադրանքները բարդ լինեն որոշ աշակերտների համար, ուսուցիչը կարող նրանց ավելի պարզեցված առաջադրանքներ տալ . օրինակ՝ հաշվել օրվա կամ շաբաթվա ծախսերը և այլն:

Օգտագործված և լրացուցիչ գրականության հետևյալ նյութերը

Քաղաքատնտեսություն, Ժողովածու, Քաղաքական դիսկուրս հանդես (diskurs.am), 2017:

Ելլի համալսարանի կարիերայի ընտրության ուղեցույց: Yale University, Five-Step Career Decision Making Process.

Էմստ-Յան դե Բրույն և Գերիտ Աստոնիդես, Աղքատությունը և տնտեսական որոշումների կայացումը. Սակավության տեսության վերանայում, 2021: Bruijn, E. de & Antonides, G. (2021) Poverty and economic decision making: a review of scarcity theory, Theory and Decision.

Դեյվիդ Յարվի, Սոցիալական արդարությունը և քաղաքը, Քաղաքական դիսկուրս հանդես, 2022:

Հրաչ Բայադյան — Սպառողական հասարակություն, ACTV
Նախագծի վիդեոբառարան, «Ֆոկուս» արվեստի ՀԿ:

«Ինվեստոպեդիա» կայք:

Թեմա 8. Մարդ և քաղաքականություն

Նպատակ

Մեկնաբանել քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում և անհատի կյանքում, օրինակների միջոցով ցույց տալ մարդու դերը քաղաքականության մեջ:

Վերջնարդյունք

7.8.1. Հիմնավորի քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում:

7.8.2. Ցույց տա քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:

8-րդ գլխի թեմատիկ բաղադրիչներն ու դրանց մատուցումը

Այս գլուխը դասավանդելիս ուսուցչի առաջնային խնդիրը աշակերտներին բացատրելն է անհատի և քաղաքականության կապը՝ անհատի կայացման մեջ քաղաքականության դերը և անհատի ազդեցությունը քաղաքականության վրա: Նաև շատ կարևոր է պարզաբանել պետություն-անհատ հարաբերությունները: Ն1.-ում տեղ գտած Արիստոտելի տեքստում պետությանն առաջնային նշանակություն է տրվում անհատի համեմատ: Սակայն ժամանակակաից իրավունքը սահմանափակում է պետության իշխանությունն

անհատի նկատմամբ և նրան օժտում որոշակի պաշտպանությամբ: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրությունը .

Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Առաջին ենթագլխի 4-րդ առաջադրանքը հարկավոր է օգտագործել այս հարցը քննարկելու համար: Ուսուցիչը իբրև Արիստոտելի մոտեցմանը հակառակ օրինակ կարող է բերել հենց ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը:

Այս գլխի երկրորդ մասը բացատրելիս ուսուցիչը կարող նաև օգտվել քաղաքական ծախս, կենտրոնամետ և աջ հոսանքների մասին գրականությունից . թեև 7-րդ դասարանի աշակերտների համար դեռ դժվար կլինի ընկալել քաղաքական հոսանքները, բայց ուսուցիչը կարող է պարզեցված ձևով լրացուցիչ տեղեկատվություն տալ աշակերտներին և հարստացնել դասը:

Օգտագործված և լրացուցիչ գրականության հետևյալ նյութերը

Արիստոտել, Քաղաքականություն:

Ստենֆորդի փիլիսոփայական հանրագիտարան:

Նաիրա Մկրտչյան – Քաղաքականություն (Politics, Policy, Polity), ACTV նախագծի վիդեոբառարան, «Ֆոկուս» արվեստի ՋԿ:

11. Ինչպե՞ս արդյունավետ կառուցել դասը

Ուսումնառության գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից, որը կարելի է պատկերացնել հետևյալ հաջորդականությամբ՝ նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, դասի ընթացքը և դասից հետո վերլուծություն, ինքնավերլուծություն:

Դասին նախապատրաստվելիս պարտադիր է նյութին մանրամասն ծանոթանալ և դասի ողջ ընթացքը պատկերացնել, սղագրել: Ամենակարևորը դասի նպատակը հստակ գիտակցելն է՝ ինչպիսի՞ քաղաքացի ենք ուզում ստանալ, ինչպե՞ս պետք է դա անենք, ի՞նչ է մեզ պետք, ինչպե՞ս ենք ստուգելու արդյունքները: Այս փուլի կարևոր բաղադրիչ է նաև դասասենյակի նախապատրաստելը, դիդակտիկ նյութերը պատրաստելը, կարգավորելը, այս ամենը կիրառվելիք մեթոդներին համապատասխանեցնելը: Եթե տեխնիկական միջոցներ են օգտագործվելու, ապա պետք է համոզվել, որ դրանք աշխատում են, եթե ինտերնետ կապ է պետք, ապահովել այն և այլն:

Գործնական կամ փորձնական առաջադրանքները պարտադիր ինքներդ փորձեք նախորդ օրը: Եթե աղյուսակ լրացնել եք հանձնարարելու սովորողներին, նախապես ինքներդ լրացրեք, գուցե շտկումների կարիք լինի:

Ստորև նշված հարցերը Ձեզ կօգնեն ավելի հստակ գնահատել դասին պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը և բուն դասապրոցեսը.

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասումներն իրատեսական:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ դասի ընթացքը:
- Իրատեսակա՞ն է դասի փուլերի ժամային բաշխումը:

- Ինչպե՞ս կարող եմ գնահատել աշակերտների հմտությունների ձեռք բերումը:
- Ինչպիսի՞ վերաբերմունք եմ ուզում ձևավորել:
- Ի՞նչ մեթոդ/ներ/ով կարելի է հասնել ցանկալի վերջնարդյունքի:
- Ի՞նչ առանցքային կարողունակություն են ձևավորում կամ զարգացնում ընտրված մեթոդները:

Դասի յնթացք

Աշակերտակենտրոն ուսումնառության բուն գործընթացը հիմնականում բաժանվում է հետևյալ պայմանական փուլերի՝ մուտք, հետադարձ կապ, (տոր) նյութի յուրացում, հետադարձ կապ, ամփոփում, անդրադարձ: Առաջարկում ենք դասը պլանավորել՝ այն բաժանելով դիդակտիկ փուլերի, որոնք նախատեսում են հետևյալ գործողությունները՝

1. աշխուժացնել
2. մեկնարկել, ակտիվացնել, քաջալերել,
3. կողմնորոշել դեպի նպատակ, ուղղորդել
4. մշակել
5. ամրապնդել, ներկայացնել, կատարել անդրադարձ
6. կիրառել, փոխանցել
7. ամփոփել, ուրվագծել հեռանկարը

Դասաժամի գործողությունների պլան մշակելու համար օգտակար նյութեր կարող եք գտնել «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում» ձեռնարկում: Մեկ դասաժամի գործողությունների պլանի այդպիսի մեկ օրինակ ներկայացված է սույն ուղեցույցի «Մարդ և բարոյականություն» բաժնում: Օգտվելով այդ օրինակից՝ կարող եք կազմել մյուս դասաժամերի պլանը: Յուրաքանչյուր դասաժամի համար առարկայական վերջնարդյունքներ

րից բացի պլանավորեք 2-3 վերառարկայական կարողունակություններ և դրանց ձևավորմանն ուղղված գործողություններ:

Դասը պետք է սկսել մոտիվացնող, հետաքրքրություն առաջացնող վարժությամբ կամ հարց(եր)ով, կամ պատմությամբ (կախված թեմայի բովանդակությունից և պլանավորած մեթոդից): Այնուհետև պետք է սահուն կերպով անցնել բուն ուսումնառության գործընթացին: Անպայման պետք է կապ ստեղծել նախորդ և ուսումնասիրվելիք թեմայի միջև: Հետադարձ կապի միջոցով վեր հանել այն բացթողումները, որոնք կարող են ազդել Նոր Նյութի ընկալման և կիրառման ունակությունների վրա: Բացթողումները վերացնելուց հետո կարող եք անցնել Նոր ուսումնասիրվելիք Նյութին: Խրախուսվում է սովորողների ինքնուրույն աշխատանքը, ակտիվ մեթոդների կիրառումը: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված ուսուցման տեսանկյունից փոխվում է ուսուցչի դերը: Ուսուցիչը հանդիսանում է սովորողի գործընկերը, նրան սովորեցնում է սովորելու ձևը, ուղղորդում է: Հնարավոր է, որ դասի նախապատրաստման ժամանակ ավելի մեծ ջանք և ժամանակ ներդնեք, սակայն ԿՁՈՒ դասի ժամանակ ուսուցիչն ավելի հաճախ հետ է քաշվում և ստանձնում է օգնողի կամ օժանդակողի դերը:

Երբ արդեն հնարավոր ամեն ինչ արվել է բոլոր երեխաների մոտ առարկայական չափորոշչով սահմանված պահանջների կատարման ուղղությամբ, ամփոփում եք դասը: Այնուհետև կատարում եք անդրադարձ: Սովորողների հետ վեր ենք հիշում, թե ինչ արեցինք դասի ընթացքում, ինչպես արեցինք, ինչու այդպես արեցինք: Երեխաները կարծիք են հայտնում, թե ինչը իրենց դուր եկավ, ինչը չհավանեցին, ինչը այլ կերպ կանեին, ինչպես կվարվեն հաջորդ անգամ:

Յուրաքանչյուր դասից հետո կատարեք ինքնավերլուծություն, ինքնանդրադարձ: Տվեք Ձեզ հետևյալ հարցերը և պլանավորեք հետագա անելիքները.

1. Արդյո՞ք դասի վերջնարդյունքները համապատասխանում էին սահմանված նպատակներին:
2. Երեխաների ո՞ր մասը չընկալեց դասի հիմնական գաղափարը:
3. Ինչո՞ւ հենց այդ մասը մնաց անհասկանալի:
4. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեմ՝ թերությունները վերացնելու համար:
5. Կարողացա՞մ հիմք դնել, ձևավորել առանցքային կարողունակություններ:
6. Ինչպե՞ս կանցկացնեմ այդ դասը հաջորդ անգամ:

Շատ կարևոր է դասին նպաստող օժանդակ նյութերի ճիշտ ընտրությունը: Անհրաժեշտ է նաև էլեկտրոնային ուսումնական նյութեր ընդգրկել դասապրոցեսին՝ որպես ցուցադրական, գործնական, քննարկման նյութեր, հնարավորություն տալ սովորողներին ինքնուրույն աշխատել դրանցով: Էլեկտրոնային հարթակները կարող եք օգտագործել գիտելիքների ձեռքբերման, ստուգման, դասի ամփոփման համար:

Գործնական աշխատանքի օրինակներ

Ստորև ներկայացնում ենք հնարավոր գործնական աշխատանքի մի քանի օրինակ:

Գործնական աշխատանք (մարդ-բնություն)

1. Մշակել բնության, շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ կամ բնության վրա մարդու վնասակար ազդեցությունը կանխող քայլեր:
2. Ստեղծել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ իրազեկող թերթիկներ և տարածել դրանք:
3. Հնարավորության դեպքում կատարե՞ք այց տեղական իշխանության մարմին և պարզեք, թե արդյոք համայնքային բյուջեում կան ծախսեր նախատեսված է շրջակա միջավայրի պահպանության համար, եթե այո, ապա ինչպիսի ծախսեր են դրանք:
4. Կատարե՞ք այցելություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կայքէջ՝ <http://www.mnp.am/>

Գործնական աշխատանք (մարդու իրավունքներ)

1. Ներկայացնել երեխայի այն իրավունքները, որոնք առավել հաճախ են խախտվում:
2. Վերլուծել այն հանգամանքները, որոնք սովորաբար հիմք են հանդիսանում երեխայի իրավունքների խախտման համար:
3. Ստեղծել սոցիալական գովազդ երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ:
4. Կատարե՞ք այցելություն մարդու իրավունքների պաշտպանի կայքէջ՝ <https://www.ombuds.am/>

Գործնական աշխատանքը կարելի է կատարել ինչպես խմբային աշխատանքի ձևով, այնպես էլ անհատապես: Գործնական աշխատանքի կատարման ձևը թողնվում է ուսուցչի հայեցողությանը, ըստ այդմ էլ կիրառվում է համապատասխան գնահատման տեսակը:

12. Ներառականության սկզբունքը ուսումնական գործընթացում

Հայաստանի Հանրապետությունը 2014 թվականին համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիությանը, հավասար մասնակցության հնարավորությանը և որակի ապահովմանը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ է համարվում խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձը, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ.*
- *Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:*

Սիրելի ուսուցիչ, Ձեր աշխատանքի ամենաբարդ կողմերից մեկը կարող է լինել ԿԱՊԿ ունեցող աշակերտների ներառումը դասարանում, նրանց դասավանդումը, հավասար իրավունքների ապահովումը, նրանց մասնակցությունն ու սահուն ինտեգրումը հասարակության մեջ:

Փորձենք Ձեզ օգնել մի քանի գործնական խորհրդով, որոնք կարող եք կիրառել «Հասարակագիություն» առարկան դասավանդելիս:

1. Օգոստոսի վերջին շաբաթվա ընթացքում փորձեք ուսումնասիրել, թե ինչ կոնկրետ խնդիրներ ունեն Ձեր դասարանի ԿԱՊԿ ունեցող աշակերտները, եթե տվյալ դասարանում առաջին տարին եք դասավանդելու: Իսկ եթե արդեն ծանոթ եք տվյալ դասարանին, ուրեմն գիտեք նրանց անհատական առանձնահատկությունները, խնդիրներն ու կարիքները, տիրապետում եք նրանց հետ աշխատելու նրբություններին:

2. Համագործակցեք դպրոցի հոգեբանի, սոցիալական մանկավարժի և բուժքրոջ հետ, ՏՄԱԿ-ի այն աշխատակիցների հետ, ովքեր աշխատում են տվյալ դասարանի ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ: Ակտիվ համագործակցեք դասավանդող մյուս ուսուցիչների հետ: Հնարավորինս շատ մանրամասներ իմացեք նրանց առողջական, ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունների, վարքի և բնավորության, ուժեղ և թույլ կողմերի մասին:

3. Կարդացեք, հետաքրքրվեք նրանց ախտորոշումներից բխող առանձնահատկությունների մասին, ուսումնասիրեք տվյալ խնդրի բոլոր առանձնահատկությունները, որպեսզի աշակերտին օգնելու փոխարեն, ավելի շատ չվնասեք:

4. Հաճախ հանդիպեք ԿԱՊԿ ունեցող աշակերտների ծնողների հետ, փորձեք նրանց դարձնել ձեր համախոհը, ընկերը, շահեք նրանց վստահությունը: Հնարավորություն տվեք պատմելու իրենց երեխայի մասին, այդպիսով դուք կիմանաք որոշ նրբություններ, որոնք չեն դրսևորվում, կամ չեք նկատել դասարանում: Իմացեք, թե ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունեն նրանք: Դա կօգնի Ձեր աշխատանքը ճիշտ կառուցելուն:

5. Ձևական ԱՌԴ-ներ մի կազմեք, սահմանեք փոքր, բայց իրատեսական և չափելի նպատակներ, ձգտեք անպայման հասնել դրանց:

6. Ամեն անգամ դասապլան կազմելիս Ձեր աչքի առաջ ունեցեք տվյալ դասարանի ԿԱՊԿ ունեցող աշակերտին, մտածեք, թե ինչ է անելու նա 45 րոպեի ընթացքում, ինչով է զբաղվելու, ինչպես է դրսևորվելու, ինչ նոր բան է սովորելու:

6. Խթանեք ԿԱՊԿ ունեցող աշակերտների մասնակցությունը խմբային, համագործակցային աշխատանքներում, տվեք նրանց հստակ հանձնարարություններ, ուղղորդեք մյուս աշակերտներին ընդգրկել նրանց թիմային աշխատանքներում տալով թեկուզ փոքրիկ, բայց իրենց ուժերին հարմար ու ոգևորող հանձնարարություն:

7. Հաճախակի գովեք, խրախուսեք նրանց հաջողությունները, դա թույլ կտա, որ նրանք ևս հավատան իրենց ուժերին և հնարավորություններին:

Բոլոր երեխաներն ունեն հավասար իրավունքներ, այդ թվում նաև կրթություն ստանալու հավասար իրավունք: Անհրաժեշտ է օգնել նրանց այդ իրավունքն իրացնելու ճանապարհին:

13. Գնահատում

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված ուսուցման ժամանակ գնահատվում են կարողունակությունները: Այսպիսով, վերջնարդյունքները դրանք կարողունակություններ են: Դրանց ստուգման գործիքների մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ուղեցույցի Նախորդ բաժիններում: Ձեր բոլոր դասերի ընթացքում աշխատեք առաջադրանքները ձևակերպել այնպես, որպեսզի պարբերաբար ստուգեք և գնահատեք առանձին աշակերտների կարողունակությունները: Անհատական արդյունքների մասին նշումներ արեք և դրանք քննարկեք նույն աշակերտներին դասավանդող մյուս ուսուցիչների հետ:

Ստորև ներկայացնում ենք պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները:

Գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման աստիճանի:

Գնահատումը միտված է յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը:

Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, օբյեկտիվության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Հաստատության կողմից գնահատման ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի, դժվարությունների և բացառիկ ընդունակության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը կարող է օգտագործվել սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Ըստ նպատակի կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

- 1) հայտորոշիչ գնահատում,
- 2) ձևավորող գնահատում,
- 3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատում

Հայտորոշիչ գնահատման նպատակն է՝ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքներն ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, կիսամյակի, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Փուլի ընտրությունը թողնվում է ուսուցչի հայեցողությանը:

Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը,

ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ:

Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից:

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

- 1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
- 2) բանավոր հարցում.
- 3) բաց հարցերով քննարկում.
- 4) այլ:

Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է՝ բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Ձևավորող գնահատման խնդիրն է ապահովել՝

1) ներառական, փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծումը.

2) սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապը.

3) սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերումը:

Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում:

Ձևավորող գնահատումն ապահովում է սովորողի՝

տվյալ պահի անհատական ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, այն քննարկվում է առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում է տնօրենի հրամանով և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

- 1) գրավոր կարճ հարցում (թեստ).
- 2) բանավոր հարցում.
- 3) գրավոր աշխատանք.
- 4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
- 5) տնային աշխատանք.
- 6) նախագծային աշխատանք.
- 7) քննարկում, բանավեճ.
- 8) այլ:

Ուսուցչի և սովորողների միջև ապահովվում է փոխադարձ հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու

փոփոխությունները՝ բարելավելու սովորողի ուսումնառության արդյունքները:

Ձևավորող գնահատում իրականացնելիս ուսուցչի կողմից օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)

Ամփոփիչ գնահատման նպատակն ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, ինչպես նաև կրթական աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման միջոցով:

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային կամ բնութագրող գնահատման միջոցով:

Հաստատության 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում սովորողի կիսամյակային ամփոփիչ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական առաջադիմության բնութագիր:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը, որոնք քննարկվում են առարկայական մեթոդական միավորման նիստում, հաստատվում տնօրենի հրամանով և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Միավորային գնահատում

Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով:

Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:

Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողների գնահատման 10-միավորային սանդղակ՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:

Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշումները՝

1) սովորողի բացակայության դեպքում «բ».

2) միավորային գնահատման հաստատված ձևերը չկատարելու դեպքում «-»:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերն ու անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ.

2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.

5) նախագծային աշխատանք.

6) այլ:

Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումներ:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Սովորողների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում և տեղայնացվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

Միավորը	Բնութագրիչները
1	ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ:
2	ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:

4	<p>Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:</p>
5	<p>Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:</p>
6	<p>Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:</p>
7	<p>Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում ցուցումների հիման վրա:</p>
8	<p>Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:</p>

9	<p>Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական մոտեցումներ:</p>
10	<p>Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:</p>

14. Նախագծային աշխատանք

Կարողունակությունների ձևավորմանն ուղղված լավագույն մեթոդը նախագծերի իրականացումն է: Այս ընթացքում սովորողների մոտ ձևավորվում է խնդիրներ առանձնացնելու, վարկածներ առաջադրելու, կանխատեսման, պլանավորման, սովորել սովորելու, կարծիք և դիրքորոշում հայտնելու հմտություններ, տեսական գիտելիքը գործնականում կիրառելու կարողություններ:

Նախագծերը խմբային աշխատանքների միջոցով իրականացնելու ժամանակ սովորողների մոտ ձևավորվում և զարգանում է ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային և համագործակցային աշխատանքի հմտություն, որոշումների կայացման մասնակցային մշակույթ:

Նախագծային ուսուցման համար լավ հիմք կարող են ծառայել համայնքում կազմակերպվող թեմատիկ էքսկուրսիաները, որոնք կարող են ծառայել հասարակագիտական կարողունակությունների և սեփական համայնքի պատմության մասին գիտելիքների, ինչպես նաև հետազոտական հմտությունների ձևավորմանը:

«Հասարակագիտություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքի բովանդակությունը լայն հնարավորություն է ստեղծում նախագծային աշխատանքի համար թեմայի ընտրության համար: Ստորև ներկայացնում ենք նախագծային աշխատանքի քայլաշարի առաջարկ:

Նախագծային աշխատանքի քայլաշար

1. Մեծ գաղափարը կամ հիմնական հասկացությունը		
2. Հիմնախնդրի ձևակերպումը (հետազոտության հարցը)		
3. Առարկա (ներ)		4. Միջառարկայական կապեր
Հասարակագիտություն		Առարկաներ
5. Դասարան (ներ) VII		
6. Նախագծային աշխատանքի սկիզբը		
7. Նախագծային աշխատանքի ավարտը		
8. Նախագծային աշխատանքի տեսակը		
Անհատական	Խմբային	Տեղական և հեռահաղորդակցական
9. Նախագծի առաջարկ (լուծում)		10. Նախագծի իրագեկում (հանրայնացում)
<ul style="list-style-type: none"> • Պաստառի պատրաստում • Բուկլետի կամ տեղեկատվական թերթիկների պատրաստում • QR կոդերի ստեղծում • Գովազդի պատրաստում • Տեսանյութի պատրաստում • Սահիկաշարի պատրաստում • Ֆիլմի պատրաստում • Վեբ-կայքերի ստեղծում • և այլն 		<ul style="list-style-type: none"> • Շնորհանդեսի միջոցով • Փորձի փոխանակման միջոցով • Սոցկայքերի միջոցով • և այլն
11. Նախագծի նպատակը		
12. Նախագծի արդիականություն և արդարացում		

13. Նախագծի իրականացման արդյունքում ակնկալվող փոփոխությունները կամ վերջնարդյունքները	
14. Նախագծի իրականացման արդյունքում սովորողների մոտ կգարգանան հետևյալ կարողունակությունները (կենտրոնանալ 2-3 առանցքային կարողունակության վրա)	<ul style="list-style-type: none"> • Լեզվական գրագիտություն և կարողունակություն • Սովորել սովորելու կարողունակություն • Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն • Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն • Թվային և մեդիա կարողունակություն • Մշակութային կարողունակություն • Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն • Տնտեսական կարողունակություն
15. Նախագծի ընթացքը	
16. Հետազոտության (կամ փորձերի) իրականացում: Հետազոտության հարցերի ձևակերպում	
17. Հետազոտության արդյունքում (կամ փորձի արդյունքում) ձեռք բերված տվյալների ստուգում	
18. Հնարավորությունների գնահատում (SWOT վերլուծություն)	
19. Նախագծի իրականացման ժամանակացույցը*	
20. Նախագծի բյուջեն*	
21. Նախագծի կրնօրինակման հնարավորություն	
22. Նախագծի գնահատում*	

* Նախագծային աշխատանքը կարելի է գնահատել և միավորային, և ձևավորող գնահատմամբ: Նախագծի

իրականացման ընթացքում, քանի որ գնահատումը կարող է կատարվել տարբեր փուլերում, այն կարելի է իրականացնել հետևյալ հնարավոր չափանիշներով ու բնութագրիչներով՝

- *Թիմային աշխատանք*
- *Նյութի բովանդակության վերահանում*
- *Նախագծի արդիականության հիմնավորում*
- *Նախագծի ինքնատիպություն ու յուրօրինակություն*
- *Տարբեր աղբյուրներից հետազոտության նյութերի որոնում*
- *Հետազոտական հարցերի ձևակերպում*
- *Սահմանված ժամանակացույցի իրատեսականություն*
- *Նախատեսված բյուջեի իրատեսականություն*
- *Ներկայացման բանավոր, ազդեցիկ խոսք*
- *Վերառարկայական կարողունակությունների ձևավորում և այլն:*

15. Մեթոդներ

Դերային խաղեր

Դերային խաղի գաղափարն այն է, երբ ինչ-որ մեկին խնդրում են ներկայացնել իրեն որպես այլ անձի կամ ինքն իրեն՝ որոշակի իրավիճակում: Այնուհետև խաղացողներին խնդրում են վարվել այնպես, ինչպես նրանք ակնկալում էին այդ մարդուց: Արդյունքում՝ նրանք ինչ-որ բան են իմանում այդ անձի և/կամ իրավիճակի մասին: Հիմնականում յուրաքանչյուր խաղացող հանդես է գալիս որպես մյուսների սոցիալական միջավայրի մի մաս և ցուցադրում է մի կաղապար, որի շրջանակներում նրանք կարող են ստուգել իրենց վարքագծի խաղացանկը կամ ուսումնասիրել խմբի փոխկապակցված վարքը: Իրավիճակները կարող են լինել պարզ կամ բարդ, ծանոթ կամ անծանոթ: Դրանք կարելի է մանրամասն նկարագրել կամ թողնել խաղացողի երևակայությանը:

Խմբային աշխատանքը խթանող մեթոդներ

Մտածել | Համագործակցել | Ներկայացնել

Այս մեթոդն ունի երեք քայլ: Նախ՝ աշակերտներն անհատապես մտածում են որոշակի հարցի մասին, այնուհետև նրանք զույգ են կազմում՝ քննարկելու և համեմատելու իրենց գաղափարները: Վերջապես, նրանց հնարավորություն է ընձեռնվում իրենց գաղափարները կիսելու դասարանի հետ՝ որպես մեծ խումբ: Նպատակն է խթանել գաղափարների ձևավորումը, բարձրացնել աշակերտների վստահությունն իրենց իսկ գաղափարների նկատմամբ, զարգացնել մեծ խմբի մոտ հանրային խոսքի/ելույթի հմտություններ:

Ձայների շրջան

Այս մեթոդի նպատակն է խթանել հանրային խոսքի և միմյանց լսելու ունակությունն աշակերտների շրջանում: Աշակերտները կազմում են չորս կամ հինգ հոգուց բաղկացած շրջաններ: Աշակերտներին հանձնարարեք ինչ-որ թեմա և մի քանի թույլ թույլ տվեք ի մի բերեն իրենց մտքերը: Այնուհետև ազդարարեք քննարկման սկիզբը. յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա մինչև երեք թույլ խոսելու հնարավորություն: Այս ընթացքում ոչ ոք իրավունք չունի որևէ բան ասելու և խանգարելու: Երբ բոլորը մեկ անգամ խոսեն ծավալեք ենթախմբային քննարկում: Նշեք, որ աշակերտներն իրենց քննարկումը պետք է ծավալեն այլոց կողմից սահմանված գաղափարների վերաբերյալ: Այս մեթոդի նպատակն է ձևավորել նոր գաղափարներ, զարգացնել լսողության հմտություններ և ստեղծել բոլոր աշակերտների համար հավասար մասնակցության հնարավորություն և համագործակցային միջավայր:

Ավտորուսի կանգառ (արագության դուետ)

Այս մեթոդի նպատակն է զարգացնել առաջադրանքի արդյունավետ մշակման և արդյունքների համալիր համեմատության հմտությունն աշակերտների մոտ: Ուղղորդեք աշակերտներին, որ նյութն առանձին մշակելուց հետո 72 մոտենան դասասենյակում գտնվող կանգառներին, որտեղ սպասում են այլ աշակերտներ: Այնուհետև խրախուսեք աշակերտներին միասին քննարկել և համեմատել իրենց լուծումները: Այս մեթոդը հատկապես կիրառելի է տարասեռ դասարանների համար, որոնցում կան տարբեր արագությամբ աշխատող աշակերտներ:

Ձևագնդի խմբեր | Բուրգեր

Այս մեթոդի շնորհիվ հնարավորություն է տրվում մեծ թվով աշակերտների ակտիվորեն, համակարգված և արդյունավետ մասնակցել խմբային աշխատանքներին և ներկայացնել իրենց կարծիքը: Աշակերտները նախ աշխատում են միայնակ, ապա զույգերով, հետո՝ չորսով և այլն: Շատ դեպքերում, չորսով աշխատելուց հետո, աշակերտները նախաձեռնում են լիազումար քննարկում, որի ընթացքում իրենց եզրակացությունները կամ լուծումները համատեղվում և ամփոփվում են: Խմբի մեծացմանը զուգընթաց առաջ քաշեք ավելի ու ավելի բարդ առաջադրանքներ և հարցադրումներ, որպեսզի աշակերտները չձանձրանան կրկնվող հարցադրումներից և առաջադրանքներից: Օրինակ՝ աշակերտներին առաջարկեք առաջ քաշել մի քանի հարցեր, որոնք վե՛րաբերում են դասի թեմային: Նախ՝ զույգերով աշակերտները փորձում են պատասխանել առաջ քաշված հարցերին, այնուհետև զույգերը միանում են՝ կազմելով չորսնյակներ և շարունակում են իրենց քննարկումները՝ հարստացնելով կամ լրացնելով առկա պատասխանները և գաղափարները: Վերջում իրականացվում է արդյունքների ամփոփում և ներկայացում: յուրաքանչյուր խմբից մեկ ներկայացուցիչ ներկայացնում է այդ խմբի քննարկման արդյունքները և եզրակացությունները: Այս մեթոդի նպատակն է առաջ քաշել նոր գաղափարներ, նեղացնել թեման, զարգացնել որոշումներ կայացնելու հմտություններն աշակերտների շրջանում:

Խմբային փազլ (մասնագիտական խմբեր)

Այս մեթոդը նախատեսում է, որ աշակերտները մասնագիտական խորը գիտելիքներ ձեռք բերեն թեմային առնչվող որևիցե բաղադրիչի վերաբերյալ, այնուհետև կիսեն իրենց

փորձը դասընկերների հետ՝ հավասարը հավասարի ուսուցման միջոցով: Թեման բաժանե՞ք մի քանի բաղադրիչների և ձևավորե՞ք 3-5 ենթախմբեր, յուրաքանչյուր ենթախմբին տրամադրե՞ք թեմայի տարբեր բաղադրիչները (կտորներ): Յուրաքանչյուր ենթախմբի խնդիրն է զարգացնել փորձագիտական գիտելիք իր առանձնահատուկ բաղադրիչի վերաբերյալ՝ ուղեղային գրոհի, գաղափարների մշակման և, եթե ժամանակը թույլ է տալիս, հետազոտական աշխատանքի միջոցով: Երբ աշակերտները ձեռք բերեն իրենց բաղադրիչի առնչությամբ մասնագիտական գիտելիքներ, փոխե՞ք խմբերը, որպեսզի Նոր խմբի յուրաքանչյուր անդամ ձեռք բերի այլ ոլորտներին առնչվող փորձագիտական գիտելիքներ: Այնուհետև աշակերտները հերթով փոխանցում են իրենց փորձը/գիտելիքը խմբի մյուս անդամներին՝ դրանով իսկ վերջնական տեսքի բերելով հիմնական թեմայի վերաբերյալ գիտելիքների ներկայակալը:

Ձկնորս | Ակվարիում

Այս մեթոդն աշակերտների մոտ զարգացնում է համապարփակ դիտարկման և վերջինիս արդյունքների վերլուծության և հետադարձ կապի ապահովման հմտություններ և կարողություններ: Բաժանե՞ք դասարանը երկու խմբի: Առաջին խումբն իրականացնում է երկրորդ խմբի կողմից կատարվող աշխատանքների ակտիվ դիտարկում: Առաջին խումբը կազմում է շրջանակ և քննարկում է որևէ հարց/թեմա կամ կատարում է դերախաղ ներկայացման տեսքով: Երկրորդ խումբն առաջին խմբի շուրջ շրջան է կազմում, և արդյունքում ստացվում է երկու շրջան՝ արտաքին և ներքին: Ներքին (առաջին) խմբին Ձեր կողմից տրված առաջադրանքի համապատասխան, արտաքին (երկրորդ) խումբը կարող է հավելյալ հարցադրումներ անել ներքին խմբին

կամ առաջադրանքներ տալ և իրականացնել ակտիվ դիտարկում՝ ինչպես ներքին խմբի մասնակիցների վարքի, այնպես էլ տրվող պատասխանների հետ կապված: Կարևոր է, որ վերջում իրականացնեք երկու խմբերի հետ քննարկում, վերլուծություն և կարծիքների փոխանակում՝ ներկայացնելով ակտիվ դիտարկման արդյունքները: Այս մեթոդի նպատակն է զարգացնել խմբային համագործակցությունը, փոխազդեցությունը, գաղափարների փոխանակման, վերլուծության և հետադարձ կապի տրամադրման հմտություններն աջակերտների շրջանում:

Ուսուցողական թիմեր

Այս մեթոդի շրջանակում աջակերտներին ուսումնական տարվա սկզբից բաժանում եք խմբերի: Երբ ցանկանում եք կազմակերպել փոքր խմբային քննարկում կամ թիմային աշխատանք՝ ձեր դասի շրջանակում, աջակերտներին ընդգրկե՛ք արդեն իսկ բաժանված խմբերում: Չորսական անդամ ունեցող խմբերն առավել արդյունավետ են աշխատում, քանի որ յուրաքանչյուր քառյակը կարող է բաժանվել զույգերի՝ կախված գործունեությունից: Այս մեթոդի նպատակն է աջակերտների միջև կայուն համագործակցության և փոխհարաբերությունների խթանում և կրթական գործընթացում մասնակցայնության մակարդակի բարձրացում:

Լուռ արտացոլում

Այս մեթոդի շրջանակում աջակերտներին տալիս եք մի քանի րոպե՝ մտածելու որևէ խնդրի կամ խոչընդոտի մասին: Խնդրե՛ք նրանց գրի առնել իրենց մտքերը և գաղափարները կաշուն թերթիկների վրա: Առաջադրե՛ք կոնկրետ խնդիր կամ մարտահրավեր, օրինակ, խնդրե՛ք նրանց գրել խնդրին առնչվող երեք ամենակարևոր դրական և բացասական

կողմերը: Ավելի օգտակար կլինի, եթե նրանք իրենց գրի առած մտքերը փակցնեն գրատախտակի կամ պատի վրա: Այնուհետև խնդրեք նրանց, որ քննարկման փուլ անցնելուց առաջ իրենց գաղափարները կիսեն իրենց համադասարանցիների հետ: Այս մեթոդի միջոցով դուք ակտիվացնում ենք ավելի պասիվ աշակերտներին և ապահովում եք, որ յուրաքանչյուր ոք հետադարձ կապ տրամադրելու հնարավորություն ունենա:

Փուլեր

Այս մեթոդն ավելի արդյունավետ է փոքր խմբերով աշխատելու համար: Շրջում եք խմբերով և խրախուսում, որ խմբի յուրաքանչյուր անդամ կիսվի իր կարծիքով առաջ քաշված հարցի վերաբերյալ: Դասավանդողները հաճախ այս մեթոդն օգտագործում են որպես մասնակիցների ծանոթացում կամ որպես դասի լիցքաթափման մաս: Փորձե՛ք խմբային աշխատանքը ձանձրալի չդարձնել՝ պարբերաբար ինչ-որ առաջադրանքներ և ուղղորդումներ տալով աշակերտներին: Փորձե՛ք հնարավորինս կարճ առաջադրանքներ տալ: Օրինակ՝ խուսափե՛ք այնպիսի հարցերից, ինչպիսիք են՝ «Ես ուզում եմ, որ բոլորը նշեն իրենց անունը, ապա մատնանշեն դասընթացի մեկ բաղադրիչ, որի մասին նրանք ոչինչ չգիտեն, բայց ցանկանում են սովորել»: Մեծ խմբերի դեպքում աշակերտները կարող են ձանձրանալ, այնպես որ կարճ հարցերի և պատասխանների դեպքում աշակերտներն ավելի կաշխուժանան, ինչն էլ մեզ անհրաժեշտ է:

Յուրաքանչյուր ճանապարհ 3 րոպե

Խնդրեք զույգերով երեք րոպե խոսել ինչ-որ հարցի մասին: Եղևք խիստ ժամանակի պահպանման առումով: Հնարավոր է, որ աշակերտները դժվարանան երեք րոպեի մեջ տեղավորվել, բայց դա հիանալի միջոց է աշակերտների համար իրենց գաղափարները հստակ և համակարգված շարադրելու առումով, ինչն իր հերթին նշանակում է, որ ավելի պասիվ աշակերտները հնարավորություն կունենան խոսելու և լսված լինելու: Առանց ընդհատելու ունկնդրելու արվեստը այն հմտությունն է, որ գրեթե բոլոր աշակերտների մոտ պետք է խթանել և զարգացնել: Այս մեթոդը կարելի է օգտագործել այլ խմբային աշխատանքներում:

Մտագրոհ

Այս մեթոդը կարող է արժեքավոր լինել ստեղծագործ և ազատ մտածողությունը խթանելու համար, հատկապես օգտակար է խնդրի լուծում փնտրելու կամ բազմազան գաղափարներ առաջ բերելու ժամանակ: Սկսե՛ք «Ինչպե՞ս կարող ենք ...» կամ «Ի՞նչ գիտենք ...» հարցերով և խրախուսե՛ք խմբին արագորեն առաջ քաշել գաղափարներ: Դրանք ինքներդ գրանցե՛ք գրատախտակին: Հստակեցրե՛ք, որ սա հետազոտական գործընթաց է, նախապես սահմանե՛ք որոշ կանոններ, օրինակ՝ ցանկալի է մեծ քանակությամբ գաղափարների սահմանում, ուստի՝ բոլորին պետք է քաջալերվի իրենց ներդրումն ունենալ ցանկացած մակարդակում այն պահին, երբ իրենց հարմարավետ զգան: Արագ և կարճ պատասխաններն այս փուլում ավելի արժեքավոր են, քան երկար, բարդ կազմված նախադասությունները: Գաղափարները պետք է նշել առանց կողմնակի մեկնաբանության և պիտակավորման՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական ձևակերպումներով: Ոչ ոք չպետք է ասի. «դա չի

ստացվի, քանի որ ...» կամ «դա լավագույն գաղափարն է, որը մենք լսել ենք մինչ այդ»: Դա կարող է ստիպել աշակերտների մի մասին ամաչել և գերծ մնալ հետագա մտքերի արտահայտման գործընթացից:

Մտքի քարտեզ

Մտքի քարտեզը տեղեկատվությունը գրաֆիկի տեսքով տեսողաբար ներկայացնելու լավ եղանակ է: Մտքի քարտեզը ցույց է տալիս ընդհանուրի մասնիկների միջև կապերը: Օրինակ՝ կարելի է ընտրել մի հասկացություն և գրատախտակի կամ պաստառի վրա կառուցել դրա մտքի քարտեզը: Կարող են ներկայացվել տվյալ հասկացության հետ կապված գաղափարներ նկարների, պատկերների, բառերի կամ բառամասերի տեսքով: Հիմնական գաղափարները ուղղակիորեն կապված են կենտրոնական գաղափարին, և այլ գաղափարները իրենց հերթին դուրս են գալիս այդ վերադաս գաղափարներից:

Առանցքակալ (կրկնակի շրջան)

Այս մեթոդի նպատակն է գաղափարների, նյութերի, կարծիքների, տնային առաջադրանքների, առանձին աշխատանքի արդյունքների համեմատությունը և ներկայացումը: Աշակերտներին ուղղորդեք ձևավորելու կրկնակի շրջան, որտեղ յուրաքանչյուր աշակերտ նստած կամ կանգնած է մյուս աշակերտի դիմաց: Յուրաքանչյուր աշակերտ ունենում է մի գործընկեր: Նրանց միջև մտքերի փոխանակումից հետո շրջանակը պտտվում է և գործընկերները փոխվում են: Երկու շրջանների միաժամանակյա պտույտը հակառակ ուղղությամբ ավելի արդյունավետ է, քանի որ գործընկերներն ավելի լավ են խառնվում: Հնարավոր է նաև ներկայացնել 2 տարբեր տեսքեր և իր համար անծանոթ տեսք ստլած աշակերտին խնդրել, որ վերջինս այն ներկայացնի

տեքստն իմացողին: Այս կերպ աշակերտները հատուկ ու-
շադրությամբ են լսում, հարցեր ուղղում և անծանոթ
տեքստն այնքան լավ են հասկանում, որ հնարավոր է դառ-
նում թե՛ ներկայացումը, թե՛ ընկալումը:

16. Գրականություն և լրացուցիչ նյութեր ուսուցչի ինքնակրթության և ինքնազարգացման համար

1. Ոսկանյան Ա., Բայադյան Յ., Սողոմոնյան Վ., «Քննադատական և ստեղծագործական մտածողություն, մասնակցային մշակույթ և քաղաքացիական համերաշխություն», ՀՀ հանրակրթական համակարգի համար հասարակագիտական բովանդակության և ժողովրդավարական կոմպետենցիաների մշակման հայեցակարգային փաստաթուղթ, Երևան, 2020թ., հղումը՝ <http://diskurs.am/2020/07/1267/> :
2. Թադևոսյան Մ., Խաչատրյան Ս., Սողոմոնյան Վ., Հովհաննիսյան Գ. և ուրիշներ, «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», Մասնակցային դպրոց աշխ. խումբ, Երևան, 2020թ., 96 էջ, հղումը՝ <https://lib.armedu.am/files/resource/files/2022-06-24/5d8195dc7c7056844d3df55aa8e58469.pdf> :
3. Խաչատրյան Ս., «Ուսուցման արդյունավետ հնարներ», Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ, հղումը՝ <https://lib.armedu.am/files/resource/files/2022-02-24/dec9c28e7d204ef8b8351212f0194bc0.pdf>:
4. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար, Եվրոպայի խորհուրդ, դեկտեմբեր 2020, (հայերեն հրատարակություն) (Եռահատոր շարք): Մաս 1՝ <https://rm.coe.int/prems-000821-arm-2510.../1680a1b757> , մաս 2՝ <https://rm.coe.int/arm-reference-framework-vol-2/1680a1bc83>, մաս 3՝ <https://rm.coe.int/arm-reference-framework-vol-3/1680a1b758> :

5. ԿՔՆ Սկզբունքներ, Ռեսուրսներ, Գործիքներ, Կրթական քաղաքացիական Նախաձեռնություն, 2019, հղումը՝ <https://lib.amedu.am/files/resource/files/2022-06-24/fee46c31559ade1daa8e751c8a940cd3.pdf>:
6. Արդյունավետ ռեսուրսներ ի նպաստ ժողովրդավարական և քաղաքացիական կոմպետենցիաների ձևավորման, «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ, 2023թ.:
7. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Պետրոսյան Մ., «Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսություն և պրակտիկան», Երևանի հանրապետական հոգեբանական կենտրոն, Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան հիմնադրամ, Երևան, 2004թ.:
8. Դիշաղաջյան Ն., Սարուխանյան Ս., Իսկանդարյան Ա., «Ուսուցանող գնահատում», Վանաձոր 2019 թ., 132 էջ:
9. Սահակյան Ա., «Սովորողների ինքնուրույն-գործնական աշխատանքներ», Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2010թ., 60 էջ:
10. Հայրապետյան Ս., Նազարյան Կ., Տոնոյան Զ., «Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում», Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ Հայաստան, Երևան 2020 թ., 102 էջ:
11. Միքայելյան Օ.Ս., Միքայելյան Ս.Օ., «Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան», Ուսուցչի ձեռնարկ, ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, Երևան 2010թ., 80 էջ:
12. Bates, A.W. (2015) Teaching in a Digital Age: Guidelines for Designing Teaching and Learning, Vancouver.

13. BC: Tony Bates Associates Ltd.
14. Drafke, M., Schoenbachler, D. & Gordon, G. (1996). Active and Passive Teaching Methodologies: Student.
15. Outcomes Over a Semester Course," Marketing Education Review, Vol. 6 (1), 1996, pp. 9-17.
16. Harvard, J. (2018, March 16). The Myths of Passive Learning. The Effortful Educator.
17. <https://theeffortfuleducator.com/2018/03/16/the-myth-of-passive-learning/>.
18. Boaler, J. (2019). Limitless Mind: Learn, Lead and Live Without Barriers, HarperCollins UK, 2019, pp. 256
19. Bonwell, Charles C.; Sutherland, Tracey E. (1996) The Active Learning Continuum: Choosing Activities to Engage Students in the Classroom. New Directions for Teaching and Learning, n67 3-16
20. Shirley Clarke. Unlocking Formative Assessment. Hodder & Stoughton, 2006.
21. Мудрик А. В., Социальная педагогика: Учеб. для студ. пед. вузов / Под ред. В.А. Сластенина. - 3-е изд., испр. и доп. - М.: Издательский центр «Академия», 2000. - 200 с
22. Панфилова А. П., Инновационные педагогические технологии: Активное обучение: учеб. пособие для студ. высш. учеб. заведений/А.П.Панфилова. — М.: Издательский центр «Академия», 2009. - 192 с.


Հանրակրթության պետական չափորոշիչ և այլ կարգավորումներ

1. ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչ՝
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> :
2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-12-և դասարանների չափորոշիչ՝
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=176084>:

Այլ նյութեր և էլեկտրոնային առցանց կրթական ռեսուրսներ

1. Հանրակրթական դպրոցներում օգտագործվող դասագրքերի և ձեռնարկների էլեկտրոնային տարբերակներ՝ <https://fliphtml5.com/homepage/fumf> :
2. ԿՁՆԱԿ հիմնադրամ՝
<https://kznakhimnadram.blogspot.com/>
3. Կրթական տեխնոլոգիականների ազգային կենտրոն՝
<https://www.ktak.am/>
4. Հայկական կրթական միջավայր, պաշարների շտեմարան՝ <https://lib.armedu.am/> :

ISBN 978-9939-1-1731-7



9 789939 117317